

# Ի Մ Ո Ւ Ղ Ե Կ Ի Ց Ը

(Մակսիմ Գոր'կի)

## I

Ես նրան Օդեսսայի նաւահանգստում պատահեցի: Մի երեք օր շարունակ իմ ուշադրութիւնն իր վրայ էր զբաւում նրա թիկնաւէտ, ամրակազմ կազմուածքը՝ գեղեցիկ միքով շըրջագծուած արևելեան տիպի դէմքով: Նա միշտ աչքովս էր ընկնում. ես տեսնում էի, թէ ինչպէս ամբողջ ժամերով կանգնում էր պատնէշի հատաքարին՝ ձեռնափայտի կոթը բերանը կոխած և կարօտագին դիտում նաւահանգստի պղտոր ջուրն իր սև նըշաձև աչքերով. օրը տասն անգամ նա մօտովս անց էր կենում անփոյթ Փլանետորի (դատարկացրջիկի) քայլուածքով: Ո՞վ է... Ես սկսեցի հետևել նրան: Նա էլ կարծես դիտմամբ ինձ գրգռելու համար աւելի ու աւելի յաճախ էր աչքովս ընկնում, և վերջապէս ես սովորեցի ջոկել հեռուից նրա մոդային, շարշար բաց գոյնի հագուստը և սև եւրոպական ձեր գլխարկը, նրա ծոյլ քայլուածքը և բութ, տխուր հայեացքը: Նա միանգամայն անբացատրելի էր այդտեղ, նաւահանգստում, նաւերի ու շոգեշարժների սուլոցների, շղթաների շառաչի, բանւորների աղմուկի, մարդուս ամեն կողմից համակած՝ նաւահանգստի կատաղի-ջղային ժխորի մէջ: Բոլոր մարդիկ զբաղուած էին, յոգնած, բոլորը վազվազում, գորգուում, հայհոյում էին փոշու, քրտնքի մէջ... այդ տարօրինակ կերպարանքն աշխատանքի ժխորում դանդաղ անցուղարձ էր անում մեռելային տխուր դէմքով, անտարբեր դէպի ամեն ինչ...

Վերջապէս արդէն չորրորդ օրը ճաշին ես հանդիպեցի նրան և վճռեցի՝ ինչ էլ որ լինի՝ իմանալ, թէ ով է: Նրանից քիչ հեռու տեղաւորուելով սկսեցի հաց ու ձմերուկ ուտել և դիտել նրան՝ հնար մտածելով, թէ ինչպէս անեմ, որ՝ որքան կարելի է բաղաքավարի ձեռվ նրա հետ խօսակցութիւն բանամ: Նա կանգնած էր՝ կոթնած թէյի արկղիկների կոյտին և

աննպատակ մտիկ անելով շուրջը՝ մատներով թխթը լիկացնում էր ձեռնափայտը, կարծես ֆլէյտ ածելիս լինէր:

Ինձ—«բոսեակի» շորով, բեռնողի թոկը մէջքիս և ածխային վոշուց աղտոտուած մարդում դժուար էր նրան—այդ Փրանտին հետս խօսել տալ: Բայց ի զարմանս իմ ես յետոյ տեսայ, որ նա ինձնից չէ հեռացնում աշքերը, և նրանք վառում են մի խիստ անգուրեկան, ագահ, անասնական կրակով: Ես վճռեցի, որ իմ դիտողութիւնների առարկան քաղցած է, և շուրջս արագ մտիկ տալով՝ կամացուկ հարցըրի նրանից.

—Քաղցած էք:

Նա ցնցուեց, ագահօրէն բաց արաւ ամրակազմ, առողջ ատամների կարծես մի հարիւրեակ և նոյնպէս կասկածանքով շուրջը մտիկ արաւ:

Մեզ վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում: Այդ ժամանակ ես ձմերուկ և ցորեն հացի մի կտոր կոխեցի նրա ձեռք: Նա խլեց այդ բոլորն ու անյայտացաւ՝ նստելով ապրանքի կոյտի ետևում: Երբեմն այնտեղից դուրս էր գալիս նրա գլուխը՝ եւրոպական գլխարկով, որը դրուած էր ծոծրակին և ծածկում էր բըտնքոտ թուխ ճակատը: Նրա դէմքը փայլում էր բացբերան ժպտով, և նա՝ չգիտեմ ինչո՞ւ շուտ-շուտ աշքով էր անում ինձ՝ ոչ մի վայրկեան չդադարելով ծամելուց: Ես նրան նշան արի սպասել ինձ, գնացի միս գնելու, գնեցի, բերի, տուի սրան և կանգնեցի արկղների մօտ այնպէս, որ բուլորվին ծածկեցի իմ խեղճ Փրանտին կողմակի հայեցքներից: Մինչև այդ նա ուտում ու անդադար գիշատիչ կերպով շուրջն էր մտիկ անում, ասես վախենում էր, որ պատառը կը խլեն. այժմ նա սկսեց հանգիստ ուտել, բայց էլի այնպէս շտապ ու ագահաբար, որ ես ցաւ էի զգում այդ սովալլուկ մարդուն նայելիս, ուստի մէջքս դէպի նա դարձրի:

—Ելացուրց! \*) (շնորհակալ եմ), շատ շնորհակալ եմ.— Նա թափահարեց ուսա, ապա ձեռա էլ բռնեց ու սկսեց անողորմաբար թափահարել:

Հինգ բոպէից յետոյ նա արդէն ինձ պատմում էր, թէ ով է: Վրացի, իշխան Շաքրօ Պտաճէն, քութայիսցի հարուստ կալուածատիրոջ միակ զաւակ, կովկասեան երկաթուղու կայարաններից մէկում գրասենեակային ծառայող, ապրելիս է լինում մի ընկերոջ հետ: Այդ ընկերը յանկարծ անյայտանում է յափշտակելով տանելով իր հետ իշխան Շաքրօի փողերն ու

\*) Նա ոսերէն խօսում էր կոպիտ արտասանութեամբ, կոտրտած: Ծ. Թ.

արժէքաւոր իրեղէնները, և ահա իշխանը հետամուտ է լինում նրան։ Մի կերպ պատահմամբ նա իմանում է, որ ընկերը տոմսակ է վերցրած եղել Բաթում գնալու, իշխան Շաքրօն նոյնպէս ուղևորւում է այնտեղ։ Բայց Բաթումում երևում է, որ ընկերը գնացել է Օդեսա։ Այն ժամանակ իշխան Շաքրօն վերցընում է ինչ-որ Վանո Սվանիձէի անցաթուղթը, —մի սափրիչ, նոյնպէս ընկեր, բայց նշաններով իրան ոչ նման, ճանապարհ ընկնում Օդեսա։ Այդտեղ նա յայտնում է ոստիկանութեանը գողութեան մասին, նրան խոստանում են, թէ կը գըտնեն գողին, նա սպասում է երկու շաբաթ, փողերը վերջացընում, և ահա արդէն երկրորդ օրն էր, որ բերանը պատառ չէր դրել։

Ես լսում էի նրա՝ հայրոյանքների հետ խառը պատմութիւնը, նայում նրան, հաւատում, և խեղճս էր գալիս երեխան։ Նա գեռ երեխայ էր, քսան տարին մոտած, բայց միամտութեանը նայած՝ նրան կարելի էր աւելի փոքր համարել նա յաճախ և խորին զայրոյթով յիշում էր այն սերտ բարեկամութեան մասին, որը կապում էր նրան գող-ընկերոջ հետ, որը գողացել էր այնպիսի իրեր, որոնց համար Շաքրօնի դաժան հայրը հաւանօրէն կը մորթէ իր որդուն «խանչալով», եթէ որդին նըրանց չգտնէ, ես միտք արի և տեսայ, որ եթէ չօգնեմ այդ տըղային, անկուշտ քաղաքը նրան կը կլանէ։ Ես գիտէի, թէ երբեմն ինչ չնչին դիպուածներ են մարդկանց մղում բոսեալիների դասակարգի մէջ, իսկ ներկայ պարագայում իշխան Շաքրօնի համար ամեն շանսեր կային ընկնելու այդ յարգելի, բայց չյարգուող դասը։ Մէջս ցանկութիւն զարթնեց նրան օգնելու։ Շաքրօին ես առաջարկեցի գնալ և ոստիկանապետից թուղթ խնդրել, նա կակաղեց և հաղորդեց ինձ, որ չի գնալ։ Ինչու Բանից դուրս եկաւ, որ նա չէ տուել իր կենալիս համարների փոլը, իսկ երբ նրանից պահանջել են, նա մէկին խփել է, յետոյ թագնուել և այժմ արդարացի կերպով ենթադրում է, որ ոստիկանութիւնը նրա բանը բուրդ կ'անէ այդ փոլը չտալու և հարուածի համար։ հա, իդէալ, նա շատ էլ լաւ չէ յիշում—մէկ հարուած է հասցըել, թէ երկու, երեք, թէ չորս։

Բանը դժուարանում էր։ Ես վճռեցի այնքան աշխատել, մինչև որ բաւական փող վաստակեմ նրա համար Բաթում գընալու, բայց աւանդ, բանից դուրս եկաւ, որ այդ իսկի էլ շուտ գլուխ գալու բան չէ, որովհետև սովալլուկ Շաքրօն ուսում էր երեք մարդու չափ և աւելի։

Այդ ժամանակ «սովեալիների» մեծ հոսանքի շնորհիւ նաւահանգտում օրավարձերը շատ ցածր էին, և ութսուն կոպէկ

վաստակից երկուսս վաթսունն ուտում էինք: Բացի այդ՝ դեռ մինչև իշխանին հանդիպելս ես որոշած էի Նրիմ գնալ, ուստի և չեմ ուղում երկար մնալ Օդեսսա: Այն ժամանակ ես իշխան Շաքրին առաջարկեցի ինձ հետ ոտով գնալ այսպիսի պայմաններով: Եթէ ես նրա հետ Թիֆլիզ գնացող ուղեկից չգտնեմ, այն ժամանակ ինքս տեղ կը հասցնեմ, իսկ եթէ գտնեմ, այդ դէպում մենք իրար հրաժեշտ կը տանք:

Իշխանը նայեց իր պետքուն մուճակներին, գլխարկին, անդրավարտիքին, ձեռքը քսեց կուռտիկին, մի քիչ միտք արաւ, մի քանի անգամ հառաջ քաշեց ու վերջապէս համաձայնեց: Եւ ահա մենք միասին ոտով ճանապարհ ընկանք Օդեսաայից Թիֆլիզ:

## II

Երբ հասանք Խերսոն, ես ճանաչում էի իմ ուղեկցին իբրև միամիտ-վայրենի, չափազանց անզարդացած, ուրախ մի տղայի—երբ նա կուշտ էր լինում, լքուած—երբ քաղցած էր, ինչպէս ուժեղ և պարզամիտ մի կենդանի:

Ճանապարհին նա ինձ պատմում էր Կովկասի մասին, կալուածատէր վրացիների կեանքի, նրանց զուարճութիւնների և դէպի գիւղացիներն ունեցած յարաբերութիւնների մասին: Նըրա զրոյցները հետաքրքիր էին, ինքնուրոյն գեղեցիկ, սակայն պատմողին նկարում էին իմ առջև չափազանց ոչ գովելի կողմից: Պատմում էր նա՝ օրինակ՝ այսպիսի մի դէպք.

Մի հարուստ իշխանի մօտ նրա հարեանները քէֆի հաւաքուեցին: զինի խմեցին, չուրեկ կերան ու խորոված, կերան լաւաշ ու փաւ, և յետոյ իշխանը հիւրերին տարաւ գոմը: Զիւրեր թամբեցին: Իշխանն իր համար վերցրեց ամենալաւը և քշեց դաշտի միջով: Կրակնամ ձի էր: Հիւրերը գովում են նըրա վայելչագեղութիւններն ու արագավազութիւնը, իշխանը նորից է սլանում, բայց յանկարծ մի գիւղացի սպիտակ ձիի վրայ նստած՝ դաշտն է դուրս թռչում և իշխանի առաջը կը-արում,—կտրում է ու... հպարտ ծիծաղում: Իշխանն ամօթահարում է հիւրերի առջև... Խստութեամբ կիսում է յօնքերը, ձեռքի նշանով մօտ կանչում գիւղացուն, և երբ նա մօտենում է, այն ժամանակ իշխանը սրի մի հարուածով կտրում է նրա գլուխը և ատրճանակն արձակելով ձիի ականջի մէջ՝ սպանում է ձին, իսկ յետոյ իշխանութեանը յայտնում իր արածը: Եւ նըրան տաժանակիր աշխատանքի են դատապարտում...

Շաքրօն այդ հաղորդում է ինձ իշխանին ափսոսով տոնով:

Ես փորձում եմ ապացուցելու նրան, որ խղճալու բան չկայ, սակայն նա միծօրէն ասում է ինձ.

—Իշխաններ քիչ կան, գիւղացիներ շատ: Մի գիւղացու համար չի կարելի դատապարտել իշխաններին: Խնչացնել է գիւղացին: Այս, —և Շաքրոն ցոյց է տալիս ինձ մի գունտ հող: — իսկ իշխանը —որպէս մատղ է:

Մենք վիճում ենք, և նա սրտմտում է: Երբ նա բարկառում է, ատամները բաց է անում գայլի նման, և երեսը սրառում է:

—Լոիր, Մակարիմ: Դու չես ճանաչում կովկասեան կեանըը, —գոչում է նա:

Իմ պատճառաբանութիւններն անզօր էին նրա իրասածութեան առաջ, և այն, ինչ որ ինձ համար պարզ էր, նրա համար ծիծաղելի էր: Երբ ես իմ հայեացքների գերազանցութեան ապացոյցներով նրան այնպիսի դրութեան մէջ էի գցում, որ նա չէր կարող ինձ հակառակել, նա առանց տարակուսելու առում էր ինձ.

—Գնան կովկաս, ապրիր այնտեղ: Կը տեսնես, որ ես ճշշմարիտ եմ ասել: Ամենքն այդպէս են անում, նշանակում է՝ այդպէս էլ պէտք է: Խնչնե ես պիտի քեզ հաւատամ, քանի որ մենակ դու ես ասում այս այսպէս չէ, իսկ հազարաւորներն ասում են՝ այս այսպէս է:

Այն ժամանակ ես լուսմ էի՝ հասկանալով, որ պէտք է ոչ թէ խօսքերով, այլ փաստերով առարկել նրան, այդ մարդուն, որը հաւատացած է, թէ կեանքը ինչպէս որ կայ, լիովին օրինական է ու արդարացի: Ես լուսմ էի, իսկ նա հիացմունքով շրթունքները չփչփացնելով խօսում էր կովկասեան կեանքի մասին, որը լի է կրակով և ուրոյնութեամբ: Այդ զրոյցներն ինձ հետաքրքրելով և գրաւելով միւնոյն ժամանակ վըրդովում ու կատաղեցնում էին իրանց վայրագութեամբ, հարցատութեանը և բիրտ ոյժին երկրպագելով: Մի անգամ ես հարցրի նրանից, թէ նա գիտէ արդեօք Քրիստոսի վարդապետութիւնը:

—Իհարկէ, —ուսերը թօթուելով պատասխանեց նա:

Բայց երբ հարցուփորձ արի, բանից դուրս եկաւ, որ նա գիտէ այսքան. մի Քրիստոս է եղել, որ հրէսական օրէնքների դէմ է դուրս եկել, և հրէսաները դրա համար խաչել են նրան խաչի վրայ: Բայց նա Աստուած է եղել, ուստի և չէ մեռել խաչի վրայ, այլ համբարձուել է երկնք և այն ժամանակ մարդկանց տուել կեանքի նոր օրէնք...

—Ի՞նչ օրէնք, —հարցրի ես:

Նա նայեց վրաս ծաղրական երկմտութեամբ և հարցրեց.

—Դու քրիստոնեայ ես: Հը՞: Ե՞ս էլ եմ քրիստոնեայ: Աշխարհիս վրայ համարեա ամենքը քրիստոնեայ են: Դէ էլ ի՞նչ ես հարցնում: Տեսնում ես, թէ ինչպէս են ապրում ամենքը... Հէնց դա էլ Քրիստոսի օրէնքն է որ կայ:

Ես վրդովուած՝ սկսեցի նրան պատմել Քրիստոսի կեանքի մասին: Նա սկզբից ուշադրութեամբ լսում էր, յետոյ այդ ուշադրութիւնն սկսեց հետզհետէ թուլանալ և վերջապէս վերջացաւ յօրանջով:

Տեսնելով որ նրա սիրտն ինձ չէ լսում, ես սկսեցի նորից դիմել նրա խելքին և խօսել փոխադարձ օգնութեան օգտաւէտութեան, գիտութեան օգտաւէտութեան, օրինաւորութեան օգտաւէտութեան, օգտաւէտութեան, զարունակ օգտաւէտութեան մասին... Իմ պատճառաբանութիւնները փշրում էին՝ դիպչելով նրա աշխարհասկացողութեան պատին:

—Ով ուժեղ է, նա ինքն իր օրէնքն է! նրան պէտք չէ սովորել, նա կոյր-կոյր էլ կը գտնէ իր ճանապահն,—ծուլօրէն տուրկեց ինձ իշխան Շաքրօն:

Նա կաքողանում էր ինքն իրան հաւատարիմ մնալ: Դա մէջս յարգանք էր զարթեցնում դէպի նա. բայց նա վայրենի էր, խատասիրտ, և ես զգում էի, որ երբեմն մէջս ատելութիւն էր բռնկում դէպի Շաքրօն: Սակայն չէի կորցնում յոյս գըտնելու մեր մէջ շօշափման կէտ և հող, որի վրայ երկուս էլ կարողանայինք միանալ և իրար հասկանալ:

Մենք անցանք Պերեկոպը և մօտենում էինք Եայլային: Ես երազում էի Ղրիմի հարաւային ափը, իշխանը ատամների արանքով իր վիրական երգերը երգելով՝ մուայլ էր: Բոլոր փողերը վերջացան, և աշխատելու տեղ էլ չկար տակաւին: Մենք շտապում էինք Թէոդոսիա, որտեղ այդ ժամանակ սկսում էին նաւահանգիստը շինելու գործերը:

Իշխանն ինձ ասում էր, որ նա էլ է բանելու, և որ փող աշխատելով՝ մենք ծովով կը գնանք Բաթում: Բաթում նա շատ ծանօթներ ունի, և անմիջապէս ինձ համար դռնապանի կամ պահապանի տեղ կը գտնէ: Նա խփում էր ուսիս և լեզուն քաղցր ծփծփացնելով՝ հովանաւորաբար ասում:

—Ես քեզ համար ա-այնպիսի կեանք ստեղծեմ որ, ծծը՛, ծծը՛: Գիսի խմես—ինչքան ուզես, ոչխարի միս—ինչքան ուզես: Կը պսակուս վիրուհու հետ, մի հաստիկ վիրուհու, ցցը՛, ծծը՛, ծծը՛..., նա քեզ համար լաւաշ կը թիւէ, երեխաներ կը բերէ, շատ երեխաներ, ծծը՛, ծծը՛:

Այդ ծծը՛, ծծը՛-ն առաջ ինձ զարմացնում էր, ապա

սկսեց գրգռել, յետոյ արդէն ինձ հասցնում էր թախծալի կատաղութեան։ Ռուսաստանում այդպիսի հնչինով խողերին են կանչում, իսկ Կովկասում նրանով արտայայտում են հիացք, ափսոսանք, բաւականութիւն, վիշտ։

Շաքրօն արդէն խիստ զգգզել էր իր մողային զգեստը, և նրա մուճակները ճաքճքուել էին շատ տեղերից։ Ձեռնափայտն ու եւրոպական գլխարկը ծախել էինք Խերսոնում։ Այդ գլխարկի տեղ նա գնել էր երկաթուղիական աստիճանաւորի մի հին Փուրաժեկա։

Երբ նա առաջին անգամ գլխին դրաւ այն,—սաստիկ ծուռ դրաւ,—ինձնից հարցըրեց։

—Սազմում է։ Գեղեցիք է։

### III

Եւ ահա Ղրիմում ենք։ Անցանք Սիմֆերոպոլը և ուղղուեցինք դէպի Եալթա։

Ես գնում էի համր սքանչանքի մէջ հողի այդ հրաշալի կտորի բնութեան առաջ, հողի, որին ամեն կողմից փաղաքշում է ծովը։ Իշխանը հառաջում էր, վշտուում և շուրջը տիսուր հայեացքներ գցելով՝ փորձում էր լցնել իր դատարկ ստամոքսըն ինչ-որ տարօրինակ հատապտուղներով։ Նրանց սննդարար յատկութիւններին ծանօթ լինելը յաջող ելքի էր հասցնում ոչ միշտ, և յաճախ նա չար հումորով ասում էր ինձ։

—Եթէ փորս տակնուվրայ անի, ի՞նչպէս պէտք է շարունակեմ ճանապարհս, հը<sup>o</sup>, ասա, ի՞նչպէս։

Մի բան վաստակելու հնարաւորութիւն չէր ներկայանում, և մենք չունենալով ոչ մի գրոշ հացի փող՝ մնում էինք մրգերով և ապագայի վրայ կապած յոյսերով։ Իսկ իշխան Շաքրօն սկսել էր արդէն ինձ յանդիմանել ծուլութեան և՝ ինչպէս ինքն էր ասում «բերանարացութեան» համար։ Նա ընդհանրապէս դարձել էր անտանելի, բայց աւելի շատ նեղացնում էր ինձ իր զրոյցներով իր առասպելական ախորժակի մասին։ Բանից դուրս էր գալիս, որ նա ժամի 12-ին նախաճաշելով «մի գառնուկ», երեք շիշ գինի, ժամի 2-ին կարող էր առանց մի առանձին դժուարութեան ճաշին ուտել երեք ափսէ ինչ-որ «չախախրիլի»\*) կամ «չխրթմա», մի ամբողջ թաւա փլաւ, մի ամբողջ շամփուր խորոված, «ինչքան ուզես՝ դոլմա» և գեռ էլլի

\*) Ճիշտը՝ «չախոլիրիլի»։

կովկասեան շատ խորտիկներ և այդ ժամանակ կը խմէր գիւնի—«ինչքան քէֆը տար»։ Նա ամբողջ օրերով պատմում էր ինձ իր խոհանոցագիտական հակոմների և հմտութիւնների մասին, —պատմում էր՝ չմիացնելով զրթունքները, վառուղ աչքերով, ատամները բաց անելով ու կրծտացնելով, հնչուն կերպով ներս քաշելով ու կուլ տալով քաղցած թուքը, որ առատութեամբ ցայտում էր նրա պերճախօս շրթունքներից։

Մի անդամ Եալթայի մօտ ինձ վարձեցին մրգեղէնի մի այգի կտրտած ձղներից մաքրելու, ևս օրավարձս նախօրօք առայ և ամբողջ յիսուն կոպէկին գնեցին հաց ու միս։ Երբ գնածս բերի, այգեպանն ինձ կանչեց, և ես գնացի՝ այդ գնած բաները յանձնելով Շաքրօին, որը հրաժարուել էր աշխատանքից՝ պատճառաբանելով, թէ գլխացաւ ունի։ Մի ժամկից յետոյ վերադառնալով՝ ես համոզուեցի, որ Շաքրօն իր ախորժակի մասին խօսելիս՝ դուրս չէր եկել ճշմարտութեան սահմանից։ Իմ գնածից ոչ մի փշանք չէր մնացել։ Դա ընկերական վարմունք չէր, բայց ես սուս արի ի դժբախտութիւն իմ, ինչպէս երևաց յետագայում։

Շաքրօն նկատեց իմ լոռութիւնը և նրանից օգտուեց իր ձևով։ Այդ ժամանակից սկսուեց մի տեսակ զարմանալի անմիտ բան։ Ես աշխատում էի, իսկ նա զանազան պատճառաբանութիւններով հրաժարում էր բանից, ուտում-խմում ու ինձ աշխատել ստիպում։ Ինձ համար ծիծաղելի և ցաւալի էր նայել նրան, այդ առողջ աղամարդին, որ ընչաքաղցութեամբ մտիկ էր անում ինձ, երբ ես գործս վերջացրած՝ յոզնած վերադառնում էի նրա մօտ, որը մի շուաք տեղ սպասելիս էր լինում ինձ։ Բայց աւելի վշտալի ու վիրաւորական էր տեսնել, որ նա ծիծաղում է վրաս այն պատճառով, որ ես բանում եմ։ Նա ծիծաղում էր, որովհետև սովորել էր ողորմութիւն ինսդրել, և որովհետև ես նրա աչքում մի անկենդան խրտութիւն էի։ Երբ նա սկսեց ողորմութիւն հաւաքել, սկզբում քաշւում էր ինձնից, բայց յետոյ, երբ մօտենում էինք մի թաթարական գիւղի, նա սկսում էր աչքիս առաջ պատրաստուել մուրալու Դրա համար նա յենուում էր փայտին և ոտը գետնով քաշ տալիս, ասես թէ ցաւելիս լինէր, իմանալով որ ժլատ թաթարները առողջ աղամարդին ողորմութիւն չեն տալ, ես վիճում էի նրա հետ, ցոյց տալիս նրա այդպիսի մի զբաղմունքի ամօթալիութիւնը... Նա ծիծաղում էր։

—Ես չեմ կարողանում բանել!—կտրուկ առարկում էր նա։ Նրան ողորմութիւն քիչ էին տալիս։ Ես այդ ժամանակ սկսել էի հիւանդանալ։ Ճանապարհն օրէցօր դառնում էր ա-

և լի դժուար և իմ յարաբերութիւնները Շաքրօի հետ աւելի ծանր: Նա այժմ արդէն խիստ պահանջում էր, որ ես նրան կերակրեմ:

—Դու ինձ տանհւմ ես: Տար, Միթէ ես կարող եմ ոտով այդքան հեռու տեղ գնալ, հը՞, ես սովոր չեմ: Ես դրանից կարող եմ մեռնել: Ի՞նչ ես ինձ չարշարում, սպանում: Ես որ մեռնեմ, մոց կը լինի: Մէրս լաց կը լինի, հէրս լաց կը լինի, ընկերներս լաց կը լինին, էդ ինչքան արցունք է անում, հա-

ես այսպիսի խօսքեր էի լուսմ, բայց չէի բարկանում: Այդ ժամանակ սկսել էր մէջս ծագել մի տարօրինակ միտք, որ ինձ հարկադրում էր զիմանալ այդ բոլորին: Պատահում էր—նա քնած է լինում, իսկ ես նրա կողքին նստած, դիտելով նրա հանգիստ, անշարժ դէմքը, կրկնում եմ ինքս ինձ՝ կարծես նախագուշակելով մի բան.

—Իմ ուղեկիցը... ուղեկիցս...

Եւ գիտակցութեանս ուշջ երբեմն ծագում էր այն միտքը, թէ Շաքրօն միայն օգտում է իր իրաւունքից, երբ այնպէս վստահ ու համարձակ պահանջում է ինձնից օգնութիւն ու խընամք: Այդ պահանջի մէջ կար բնաւորութիւն, կար ոյժ: Նա ինձ հարստահարում էր, ես նրան ենթարկում էի և ուսումնասիրում, հետևում նրա կերպարանքի իւրաքանչիւր դողոցին՝ աշխատելով մէջս պատկերացնել, թէ ուրիշ անձնաւորութիւն թալանելու այդ պրոցեսի մէջ ուր և ինչի վրայ կանգ կ'առնի նա: Իսկ նա իրան շատ լաւ էր զգում, երգում էր, քնում ու ծիծաղում վրաս, երբ քէքը տալիս էր: Երբեմն իրարից բաժնուում էինք երկու-երեք օրով, գնում զանազան կողմեր. ես նրան հաց ու փող էի տալիս, եթէ լինում էր, և ասում, թէ որտեղ ինձ սպասէ: Երբ կըկին հանդիպում էինք, այն ժամանակ նա, որ ինձ ճանապարհ դրած էր լինում կասկածանքով ու տիսուր չարութեամբ, դիմաւորում էր սաստիկ ուրախ, հրճուած և միշտ ասում էր ծիծաղելով.

—Ես կարծում էի, թէ դու ինձ թողել, մենակ փախել եսւ չա, հա, հա...

Ես նրան ուտելու բան էի տալիս, պատմում էի իմ տեսած գեղեցիկ տեղերի մասին, և մի անգամ Բախչա-Մարայի մասին խօսելիս՝ իդէպ պատմեցի Պուշկինի մասին և առացի նրա ոտանաւորներից: Այդ բոլորը ոչ մի տպաւորութիւն չարաւ վրան:

—Է՞, ոտանաւորներ: Դա երգեր են և ոչ թէ ոտանաւորներ: Ես մի մարդ եմ ճանաչում, վրացի, Մատո Լեժաւա, նա էր երգ ասում է: Ա՞յ, դա երգեր էին... Որ երգում էր—այ,

այ, այ... բարձր... շատ բարձր էր երդում: Կ'ասես թէ կոկորդը խառնածորում են խանչալով!.. Նա մի գինեվաճառ մորթեց, հիմի Սիբիր է գնացած...»

Ամեն մի նրա մօտ վերադառնալիս ես աւելի ու աւելի էի ընկնում նրա աչքում, և նա չէր կարողանում այդ թագցը՝ նել ինձնից:

Գործներս շատ վատ էր: Ես հազիւ էի հսարաւորութիւն գտնում մի կամ մէկովէս ըուբլի աշխատել շաբաթական, և, ինքնըստինքեան հասկանալի է, որ այդ աւելի քան քիչ էր երկուսիս համար: Շաքրօի մուրալը չէր նպաստում կերակրի տնտեսութեանը. նրա ստամոքսը մի փոքր անդունդ էր, որ կլանում էր անխտիր ամեն ինչ—խաղող, սեխ, աղ դրած ձուկ, հաց, չորացրած մրգեր—և ժամանակի ընթացքում նա կարծես աւելի էր մեծանում ծաւալով և աւելի ու աւելի զոհեր պահանջում:

Շաքրօն սկսեց շտապեցնել ինձ դուրս գալու Ղրիմից՝ պատճառաբանօրէն յայտնելով ինձ, որ շուտով արդէն աշունը վրայ կը հասնի, իսկ ճանապարհ դեռ շատ կայ: Միւս կողմից էլ ես նայել վերջացրել էի Ղրիմի այդ մասը, և մենք ճանապարհուեցինք դէպի Թէոդոսիա այն յուսով, որ «մի քանի շահի կը գցեք ճանկներա», որից էլի գուրկ էինք, նորից պէտք է մնուէինք մրգերով ու ապագայի յուսով...

Խեղճ ապագայ: Նրա վրայ դրած մարդկային յոյսերի շատութիւնից նա կորցնում է համարեա իր բոլոր հայքը, հէնց որ ներկայ է դառնում:

Ալուշտայից քսան վերստ հեռանալով մենք կանգ առանք գիշերելու, Ես Շաքրօն համոզել էի ծովափով գնալ, թէև այդ շատ երկար ճանապարհ էր, բայց ուզում էի ծովի օդ շնչել: Մենք խարոյկ վառեցինք և պառկոտեցինք նրա մօտ: Երեկոն հրաշալի էր: Մուգ-կանաչ ծովը ներբեռում մեզնից վար զարկւում էր ժայռերին. կապոյտ երկինքը հանդիսաւոր կերպով լուռ էր վերեսում, իսկ մեր շուրջը մեղմիկ սլալում էին թփերն ու ծառերը: Լուսինը դուրս էր գալիս: Սօսիների ճամկաւոր սաղարթից ստուերներ էին ընկնում և սողում քարերի վրայով: Մի ինչ—որ թոշուն երգում էր ըմբոստ ու զիլ: Նրա արծաթահընչիւն դայլայլիկները հալչում էին ալիքների մեղմ ու փաղաքշող վշշոցով լցուած օդի մէջ, և երբ նրանք անհետացան, լըսուեց մի միջատի ջղային ճոճոցցը: Խարոյկը զուարթ այրում էր, և նրա կրակը թուռմ էր կարմիր ու դեղին ծաղիկների մի բոցավառ փունջ: Նա էլ էր ստուերներ առաջացնում, և այդ ստուերներն ուրախ-ուրախ ցատկում էին մեր շուրջը՝ ասես

զուսնի դալուկ ստուերների առաջ պարծենալով իրանց աշխուժ-  
ժութեամբ։ Մովի լայն հորիզոնն ամայի էր, նրանից վեր եր-  
կինքն անամպ, և ես ինձ աշխարհիս մի ծայրումն էի զգում  
դիւելիս տարածութիւնը—մարդու հոգին դիւթող այդ առեղ-  
ծուածը... Գիշերւայ փառահեղ գեղեցկութեամբ հոգեզմայլ՝ ես  
ասես հալչում էի գոյների, ձայների ու հոտերի զարմանալի  
ներդաշնակութեան մէջ, ինչ-որ մեծ բանի մօտ լինելու երկշոտ  
զգացումով լցում էր հոգիս, և սիրտս թրպրտալով թալկա-  
նում էր կեանքի վայելքով...

Յանկարծ Շաքրօն բարձրաձայն քրքջաց.

—Հա, հա, հա... Ի՞նչ տխմար կերպարանք ունես։ Բոլո-  
րովին ինչպէս ոչխարի։ Ա՛, հա, հա, հա, հա...

Ես վախեցայ, ասես թէ գլխիս յանկարծակի որոտը թըն-  
դաց։ Բայց այդ աւելի վաս էր։ Դա ծիծաղելի էր, այո, բայց  
ի՞նչպէս վիրաւորական էր... Նա, Շաքրօն, լալիս էր ծիծաղից,  
ես ինձ լալու պատրաստ էի զգում ուրիշ պատճառով։ Կոկոր-  
դումս կարծես քար կար, ես չէի կարողանում խօսել և վայ-  
րագ աչքերով նրան էի նայում, որով աւելի էի սաստկացնում  
նրա ծիծաղը։ Նա թաւալում էր գիտնի վրայով՝ փորը բռնած.  
Ես էլ գեռ չէի կարողանում զինքն հաւաքել ինձ հասցրած վիրաւո-  
րանքից... Ինձ խիստ ծանր վիրաւորանք էր հասցրուած, և  
այն քիչ մարդիկ, որոնք՝ յուսով եմ որ կը հասկանան այդ,  
—որովհետև գուցէ իրանք զգացել ես այդօրինակ մի բան,—  
նրանք նորից կը վերզգան իրանց հոգում այդ ծանրու-  
թիւնը։

—Վերջ տուր, —կատաղած գորացի ես։

Նա վախեց, ցնցուեց, բայց գեռ էլի չէր կարօղանում ի-  
րան զսպել։ ծիծաղի բռնկումները գեռ էլի բռնում էին նրան, նա  
ուղցնում էր թշերը, աշքերը չուտս, և յանկարծ նորից փըռթ-  
կացնում։ Այն ժամանակ ես վերկացայ և հեռացայ նրանից։ Ես  
երկար զնում էի՝ առանց մտածելու, համարեա առանց  
գիտակցելու, մենակութեան և վիրաւորանքի այրող թունով  
լցուած։ Ես գրկում էի ամբողջ բնութիւնը և լուռ, ամբողջ հո-  
գով սէրս էի յայտնում նրան, վառ սէրը մի մարդու, որը քիչ  
բանաստեղծ է... իսկ բնութիւնը՝ յանձին Շաքրօի՝ քրքջում էր  
վրաս յափշտակութեանս համար։ Ես հեռու կը զնայի մեղա-  
դըրական վճիռ կայացնելում բնութեան, Շաքրօի և կեանքի  
բոլոր կարգերի դէմ, սակայն յետելից արագ քայլեր լսուեցին։  
—Մի բարկանար—ամօթահարուած արտասանեց Շաքրօն՝  
կամաց դիպչելով ուսիս։ —Դու աղօթմամ էիր։ Ես չգիտէի։ Ես  
ինքս չեմ աղօթում...

Նա խօսում էր չարութիւն արած երեխայի երկչոտ տոռնով, և ես՝ չնայելով յուզմունքի՝ չկարողացայ չտեսնել նրա խղճալի կերպարանքը՝ շփոթմունքից ու վախից ծիծաղելի կերպով ծովուած:

—Ես այլա քեզ ձեռք չեմ տալ: Ճշմարիտ! Երբէք:

Նա բացասարար թափահարեց գլուխը:

—Ես տեսնում եմ, որ դու խոնարի ես: Բանում ես: Ինձ չես ստիպում: Մտածում եմ—ինչու: Ուրեմն—յիմար է նա ոչխարի պէս...

Այդ նա ինձ մխիթարում էր: Այդ նա ներողութիւն էր խնդրում ինձնից: Իհարկէ՝ այդպիսի մխիթարանքներից ու թողութիւն հայցելուց յետոյ ինձ ոչինչ չէր մնում անելու, եթէ ոչ՝ ներել նրան ոչ միայն անցեալը, այլ և ապագան:

Կէս ժամից յետոյ նա խորը քնած էր, փսկ ես նստած էի նրա կողքին ու նայում էի նրան: Քնած ժամանակ ուժեղ մարդն անգամ անպաշտպան ու անօգնական է թւում, իսկ Շաքրօն արգահատելի էր: Նրա հաստ զրթունքները կիսարաց էին և կիտած յօնքերի հետ միասին պատկերացնում էին նրա դէմքին զարմանքի զուտ-մանկական մի արտայայտութիւն: Շնչում էր նա համաշափ, հանգիստ, բայց երբեմն դեգերում ու զառնցում էր՝ վրացերէն ամբողջ դարձուածներ ասելով աղաչանքով ու փութէլու: Մեր շուրջը թագաւորում էր այն լարուած խաղաղութիւնը, որից միշտ մի բան ես սպասում, և ոքը եթէ կարողանար երկար շարունակուել, մարդուն խելքից կը հանէր իր կատարեալ անդորրութեամբ ու հնչինի—շարժման այդ պայծառ ստուերի բացակայութեամբ: Ալիքների մեղմ ճողփիւնը չէր հասնում մեզ, — մենք գտնւում էինք մի փոսում, որը պատած էր կպչուն մացաներով, կարծես քարացած կինդանու բրդբրդոտ բերան լինէր: Ես մտիկ էի անում Շաքրօնին ու մտածում: «Աս իմ ուղեկիցն է... Ես կարող եմ սրան այստեղ թողնել, բայց չեմ կարող նրանից հեռանալ, ուրովինետև նրա անունը լեզին է... Աս իմ ամբողջ կեանքի ուղեկիցն է... Նա մինչեւ գերեզման կ'ուղեկցէ ինձ»...

#### IV

Թէոդոսիան ի դերև հանեց մեր յոյսերը: Երբ մենք տեղ հասանք, այնտեղ կար մօտ չորս հարիւր մարդ՝ մեզ պէս գործի սպասելիս և նոյնպէս ստիպուած քաւականանալ նաւամատոյցի պատնէշը շինելուն հանդիսատես լինելու դերով: Աշխատում էին թուրքեր, յոյներ, վրացիներ, սամոլենսկցիներ, պոլ-

տաւցիներ, Ամենուրեք — և՝ քաղաքում, և՝ նրա շուրջը — խմբերով շրջում էին «սովեալների» դժոյն, չարչարուած կերպարանքներ, և գայլային արշաւանքով դէս-դէն էին թափառում ազովեան ու տարիկեան բոսեակները:

Տեսնելով՝ որ այդտեղ ոչինչ չկայ, և որ պատնէշը կամենում են շինել առանց մեզ, մենք գնացինք կերչ:

Իմուղեկիցը կատարում էր իր խօսքը և ինձ ձեռք չէր տալիս. բայց նա սաստիկ սովում էր և մէկի ուտելը տեսնելիս՝ ուղղակի գայլի նման կրճացնում էր ատամները՝ ինձ սարսափեցնելով զանազան կերակրեղէնի քանակների նկարագրութեամբ, կերակրեղէնի, որ նա պատրաստ էր կլանելու. Մի քանի ժամանակից ի վեր նա սկսել էր յիշել կանանց մասին: Մկրդրում հարևանցօրէն, ափսոսանքի հառաջներով, ապա յաճախ, «արևելցի մարդու» ընչափաղց ժպիտներով, նա վերջապէս հասաւ այն աստիճանի, որ այլևս չէր կարող չասել ինձ մի որևէ դործնական-փիլիսոփայական կեղտոտութիւն այս կամ այն հանգամանքի առիթով, երբ մօտովն անցնում էր կանանց սեռին պատկանող որևէ անձնաւորութիւն, քանի տարեկան և ինչ արտաքին էլ ունենար: Նա ճառում էր կանանց մասին այնպէս ազատ, առարկայի այնպիսի ճանաչողութեամբ և նայում էր նրանց վրայ այնպիսի զարմանալի-բաց տեսակէտով, որ ես միայն թքոտում էի... Մի անգամ փորձեցի նրան ապացուցելու, որ կինը նրանից հչ վատ արարած է, բայց տեսնելով որ նա ոչ միայն վիրաւորում է ինձնից իմ հայեացքների համար, այլև պատրաստ է կատաղութեան հասնելու այն ստորացման համար, որին՝ նրա կարծիքով՝ ես ենթարկում էի նըրան, — թողեցի փորձերս մինչև այն ժամանակ, երբ նա կուշտ կը լինի:

Մենք կերչ էինք գնում էլ ոչ ծովափով, այլ դաշտավայրով՝ ճանապարհը կարճելու դիտումով, և մեր պարկում կար ընդամենը երեք գրգմանքանոց մի գարի բողն, որ գնել էինք մի թաթարից մեր վերջին շահանցոյի: Շաթրօի՝ գիւղերում հաց մուրալու փորձերը ոչ մի հետևանքի չհասցըին, ամենուրեք հակիրճ պատասխանում էին. «Ճեզ պէսները շատ կան»... Այդ մեծագոյն ճշմարտութիւն էր. իրաւ, այդ ծանր տարին անչափ շատ էին մի կտոր հաց որոնողները:

Իմ ուղեկիցը հանդուրժել չէր կարող «սովեալներին» — ողորմութիւն ժողովելու մէջ իր մըցակիցներին: Նրա կենսական ուժերի պահեստը՝ չնայելով ճանապարհի դժուարութեան և վատ մննդառութեան՝ թոյլ չէր տալիս նրան ընդունելու այնպիսի մաշուած և խղճալի տեսք, որով մուրացկաններն արդարեւ կա-

ըող էին պարծենալ որպէս մի տեսակ կատարելութեամբ. և նա նրանց դեռ հեռուից տեսնելիս՝ ասում էր.

— էլի՞ գալիս են: Թիւհ, թիւհ, թիւհ: ի՞նչ են ման մալիս: ի՞նչ են գալիս: Միթէ Ռուսաստանը նեղ է: Զեմ հասկանում! Ռուսաստանում շատ տիմար է ժողովուրդը:

Եւ երբ ես բացատրում էի նրան այն պատճառները, որոնք ստիպել էին տիմար ոռու ժողովրդին շրջել Ղրիմում հաց մուրալու նպատակով, նա անվստահութեամբ զլուխն օրու բելով՝ առարկում էր.

— Զեմ հասկանում! ի՞նչպէս կարելի է... Մեզ մօտ Վրաստանում այդպիսի անմտութիւններ չեն լինում!

Մենք կերչ հասանք ուշ երեկոյեան և ստիպուած եղանք գիշերելու նաւահանգստի՝ նաւից ափը տանող կամրջիկների տակ: Մեզ անհրաժեշտ էր թափնուել. մենք գիտէինք, որ մեր գալուց քիչ առաջ բոլոր աւելորդ մարդիկ—բռնեակները կերչից դուրս էին հանուած, և վախում էինք, որ սոտիկանատուն կ'ընկնենք. իսկ որովհետև Շաքրօն ճանապարհորդում էր ուրիշի անցագրով, ուստի այս հանգամանքը կարող էր մեր վիճակի մէջ լուրջ բարդութիւններ առաջ բերել:

Նեղուցի ալիքներն ամբողջ գիշերն առատութեամբ ողուզում էին մեզ ցոլքերով, և լուսաբացին մենք դուրս եկանք կամրջիկների տակից թրջուած ու փէտացած: Ամբողջ օրը շըրջեցինք ծովափին, և բոլորն, ինչ որ աջողուեց մեզ վաստակել, մի հատ երկու զահանոց էր, որ ես ստացել էի մի տէրտէրակը-նից, որի մի պարկ սեխը շուկայից տուն էի տարել:

Այժմ հարկաւոր էր նեղուցով անցնել Տաման': Ոչ մի մակոյկատէր չէր համաձայնում ընդունել մեղ իրըն մակոյկավար միւս ափն անցնելու համար, որքան էլ որ ինդրեցի: Բուլորը գրգռուած էին բռնեակների դէմ, որոնք մեր գալուց քիչ առաջ այդտեղ շատ սխրագործութիւններ էին արել, իսկ մեզ ոչ անհիմնապէս նրանց դասից էին համարում:

Երբ հասաւ երեկոն, ես անաջողութիւններիս և ողջ աշխարհի վրայ չարացած լինելուց՝ վճռեցի բաւական վտանգաւոր մի բան բռնել և գիշերը համնելուն պէս ի կատար ածեցի այն:

## V

Գիշերը ես ու Շաքրօն կամաց մօտեցանք մաքսային նաւահանգստին, որի մօտ երեք մակոյկ կար՝ ծովափնեայ քարէ պատում ամրացրած օղակներից շլթաններով կապած: Մութ էր,

գչում էր քամին, մակոյկներն ընդհարւում էին իրար, շղթաները շառաջում էին... Եւ ինձ համար հեշտ ու յարմար էր տեղահան անել օղակն ու հանել քարից:

Մեզնից վեր հինգ արշինաչափ տարածութեան վրայ ման էր գալիս մաքսային զինուր պահապանը և ատամների արանքով սուլում էր, երբ նա մեզնից մօտիկ կանգ էր առնում, ես ընդհատում էի աշխատանքս, բայց դա աւելորդ զգուշութիւն էր. նա չէր կարող ենթադրել, թէ մինչև կոկորդը ջրի մէջ մարդ կայ նստած՝ ալիքից քշուելու վրանգին ենթարկուելով։ Առանց այն էլ շղթաներն անընդհատ շառաջում էին և առանց իմ օդնութեան. Շաքրօն արդէն ձգուել էր մակոյկի յատակին և ինձ ինչ-որ մի բան էր շնչում, որը ես չկարողացայ՝ գլխի ընկնել ալիքների աղմուկի պատճառով։ Օղակը ձեռներում էր... Ալիքը խլեց նաւակը և միանգամից նետեց նրան ափից հինգ սաժէն հեռու: Ես բռնել էի շղթայից և լողում էի նաւակի հետ, յետոյ մտայ մէջը։ Մենք հանեցինք երկու ծածկոյթային տախտակ և թիակների տեղակ նրանց ամրացնելով թիատեղերում՝ ճանապարհ ընկանք...

Մեզնից վեր ամպերն էին թոչում, վեզնից վար ալիքներըն էին դէս-դէն ընկած, և Շաքրօն ցուուկին (նաւաքթին) նըստած՝ մերթ կորչում էր աչքիցս՝ նաւաքթի հետ միասին ջրային խորխորատների տակն անցնելով, մերթ բարձրանում էր ինձնից վեր և գոռալով՝ թրմիում համարեան ինձ վրայ: Ես նրան խորհուրդ տուի տեղը պինդ նստել և չգործուալ, եթէ չէ ուղում, որ պահապանը լսէ: Այն ժամանակ նա սուս կացաւ: Ես նրա երեսի տեղ տեսնում էի մի ճերմակ քիծ: Նա բոլոր ժամանակ ղեկն էր բռնած: Մենք ժամանակ չունեինք մեր գերերը փոխելու և վախում էինք նաւակի միջով մի տեղից միւս տեղն անցնել: Ես բարձր ասում էի նրան, թէ ինչ դիրք տալ նաւակին, և նա իսկոյն ինձ հասկանալով՝ անում էր ամեն բան այնպէս արագ, որ կարծես թէ հէնց նաւաստի էր ծնուել: Թիակներ փոխարինող տախտակները քիչ էին օդնում ինձ և միայն ձեռներիս կոշտերն էին հարում: Քամին փշում էր հակառակ, և ես քիչ էի հոգում այն մասին, թէ ուր է տանում մեզ՝ աշխատելով միայն, որ նաւաքթը դէպի նեղուցն ուղղաձիգ լինի: Դա հեշտ էր անել, որովհետև դեռ երևում էին ներչի կրակները: Ալիքները երևում էին մեզ նաւեղերի վրայով և զայրագին վշշում էին՝ իրար ընդհարուելով. քանի շատ էինք դէպի նեղուցը տարւում, այսքան ալիքներն աւելի ուժգին և աւելի աղմկող էին դառնում: Արդէն լսում էր մի ինչ-որ մռնչիւն, վայրենի, ահարկու... իսկ նաւակը շարունակ տարւում էր աւելի ու աւելի

արագ, շատ դժուար էր դարձել ընթացքի ուղղութիւնը պահպանել: Մենք մի գույխ գորտում էինք խոր վեճրի մէջ և վեր էինք թռչում ջրային բլուրները, իսկ գիշերն աւելի ու աւելի էր մթնում, և ամպակոյտերն աւելի ցած էին իշխում: Նաւաքըթի վրայով երևացող կրակները կորան խաւարի մէջ, և այն ժամանակ սարսափելի դարձաւ: Թուում էր, թէ կատաղի ջրի այդ տարածութիւնն արդէն էլ սահմաններ չունէր: Ոչինչ չէր երևում, բացի նաւակին ընդառաջ թռչող ալիքներից: Այդ ալիքները ձեռքից խլեցին մի տախտակը, միւն էլ ինքս զցեցի յատակը և երկու ձեռքով ամուր բռնեցի նաւեղբերից: Շաքրօն վայրենի ձայնով վայում էր ամեն անդամ, երբ նաւակը վեր-վեր էր թռչում: Զայրացած տարերքով պատած և նրա աղմուկից խլացած՝ ես ինձ զգում էի խղճալի և անզօր այդ մոայլ մէջ: Սիրոս անյօյս, չար յուսահատութեամբ համակուած՝ ես տեսնում էի շուրջս զարհուրելի միօրինակութիւն—ամենուրեք միայն այդ ալիքները ձերմակ բաշերով, որնք ցրում ու աղի ցոլքեր էին դառնում, և ինձնից վեր ամպակոյտերը, խիտ, թաւոտ, նոյնպէս նման ալիքներին... ես հասկանում էի միայն մի բան. այն ամենն, ինչոր կատարում է շուրջս, կարող է լինել անչափ ուժգին և աւելի ահոելի, և ես բարկանում էի, որ նա իրան պահում է և չէ ուղղում այդպէս լինել: Մահն անխուսափելի է: Բայց անհրաժեշտ է այդ անշառ, ամեն բան ծանրութեթև անող օրէնքը մի որևէ բանով պաճուծել, որովհետև նա չափազանց է ծանր ու բիրոտ: Եթէ որ ինձ վիճակուած լինէր այրուել կրակում կամ խեղդուել ճահճային մամուռի մէջ, ես կ'աշխատէի ընտրել առաջինը—էլի մի տեսակ աւելի վայելուչ է...

—Պարզե՞նք առագաստը, —գոչեց Շաքրօն:

—Ո՞ւր է նա, —հարցողի ես:

—Իմ չէքմէնս շինենք առաջաստ...

—Գցիր այստեղ։ Դեկը բաց չթողնես...

Շաքրօն սուսուփուս դիրար եկաւ նաւաքթի վրայ:

—Բոնիք...

Նա գցեց դէպի ինձ իր չէքմէնը։ Յատակի վրայով մի կերպ փորսող տալով ես նաւածածկոյթից պոկեցի մի տախտակ ևս, հաստ շորի թևը հազցրի նրան, նաւակի նստարանի մօտ տնկիցի, ոտներս դէմ տուի և կերցրի միւս թեն ու փեշը թէ չէ, երբ մի բոլորովին անսպասելի բան պատահեց... Նաւակը սովորականից շատ բարձր ցատկեց, ապա ցած թռաւ, և ես ինձ ջրի մէջ տեսայ՝ մի ճեռումս պահած չէքմէնը, իսկ

միւսով բռնած թոկից, որ պատ էր տուած նաւեղբի դրսի կողմից: Ալիքները գորոցով ցատկում էին գլխիս վրայով, և ես կուլ էի տալիս դառնաղի ջուրը: Նա լցուեց ականջներս, բերանս, քիթս... Ձեռներով ամուր բռնած թոկից՝ ես բարձրանում ու իջնում էի ջրի վրայ՝ գլուխս թրիկացնելով նաւեղբին և չէքմէնը նաւակի յատակը զցելով աշխատում էի՝ ինքս էլ թռչեմ նաւակը: Իմ տասնեակ ճիգերից մէկն աջողուեց, ես նաւակը հեծայ և իսկոյն տեսայ Շաքրօին, որը գլորուում էր ջրի մէջ՝ երկու ձեռքով բռնած նոյն պարաններից, որ ես հէնց նոր բաց էի թողել: Բանից երևաց, որ նրանք պատում էին ամբողջ նաւակի շուրջը՝ անցկացրուած լինելով եղբերին ամերացրուած երկաթէ օղակներով:

—Կենդանին ես—գոչեցի ես նրան:

Սյդ վայրկենին նա ջրից բարձր ցատկեց և նոյնպէս նետուեց նաւակի յատակը: Ես նրան բռնեցի, և մենք դէմառդէմ ելանք, միասին: Ես նստած էի նաւակի վրայ՝ ինչպէս ձիի, ոտներս զցած թոկերի մէջ՝ ինչպէս ասպանդակների, —բայց այդ անյուսալի էր, ամենաշնչին ալիքը կարող էր հեշտութեամբ վայր գլորել ինձ թամրից: Շաքրօն ձեռներով պինդ բռնեց ծնկներիցս և գլուխը դէմ տուաւ կրծքիս: Նա ամբողջովին դրդում էր, և ես զգում էի, թէ ինչպէս էին դողդողում նրա ծնոտները: Պէտք էր մի բան անել: Յատակը լարձուն էր, կարծես իւղ քսած լինէր: Ես Շաքրօին ասացի, որ նա նորից ջուրը մտնէ և բռնէ մի նաւեղբի թոկից, իսկ ես նոյնը կ'անեմ միւս նաւեղբի վրայ: Պատասխանի տեղ նա սկսեց գլխով հըրեներել կրծքիս: Ալիքները վայրենի պարով շարունակ ցատկը տում էին մեր վրայով, և մենք հազիւհազ էինք կարողանում տեղներս մնալ. մի ոտս սաստիկ կարում էր թոկը: Ամենուրեք, ուր միայն տեսանելի էր, գոյանում էին ջրի բարձր բլուրներ և աղմկով անյայտանում:

Ես ասած կրկնեցի Շաքրօին արդէն հրամանի տոնովե նա աւելի ուժգին սկսեց գլխով հարու տալ կրծքիս: Դանդաղել չէր կարելի: Ես ինձանից պոկեցի նրա ձեռները մէկը միւսի յետելի և սկսեցի նրան ջուրը հըրել՝ աշխատելով, որ նա թոկըն իր ձեռն զցի: Եւ այդտեղ կատարուեց մի բան, որ ինձ ամենից աւելի վախեցրեց այդ գիշեր:

—Խեղդում ես ինձ, —շնչաց Շաքրօն և մտիկ տուաւ դէմքիս:

Սյդ իսկապէս զարհուրելի էր: Զարհուրելի էր նրա հարցը, աւելի զարհուրելի՝ նրա հարցի տոնը, որի մէջ հնչում էր և երկոտ հնազանդութիւն ֆակտին, և երկոտ խնդիր խնայե-

լու, և վերջին հառաջանք մի մարդու, որը կորցրել է ճակատագրական վախճանից խուսափելու յոյսը։ Բայց աւելի սարսափելի՛ էին մեռելային-գունատ թրջուած դէմքի վրայի աշքերը...»

Ես գոչեցի նրան.

—Պինդ կաց, —և ինքս մտայ ջուրը՝ թոկից բռնած։ Ուս խփուեց մի բանի, և առաջին վայրկենին ցաւի պատճառով ոչինչ չկարողացայ հասկանալ։ Բայց յետոյ հասկացայ։ Մէջս մի ջերմութիւն բռնկուեց, ես հարբեցի և զգացի ինձ այնպէս ուժեղ, ինչպէս երբէք...»

—Գետին, —գոչեցի ես։

Դուցէ մեծ ծովագնացները, որոնք գտել են նոր երկներ, նրանց աեսնելիս այս բառը գոչել են աւելի մեծ զգացմոնքով, քան թէ ես, բայց կասկածում եմ, որ նրանք կարողացած լինէին ինձնից աւելի բարձր գոչել։ Շաքրօն ճշաց, և մենք ջուրը թափուեցինք։ Բայց շուտով հիասթափուեցինք երկուս էլ, ջուրը դեռ մինչև կրծքներս էր համսում, և ոչ մի տեղ չէին երևում ցամաք ափի աւելի էական նշաններ։ Ալիքներն այստեղ աւելի թոյլ էին և արդէն չէին ցատկուում, այլ յամրօրէն գըլտորուում էին մեր վրայով։ Բարեբախտաբար ես ձեռքիցս բաց չէի թողել մակոյկը։ Եւ ահա ես նրա մի կողի մօտ կանգնեցի, Շաքրօն միւս կողի, և փրկարար թոկերից բռնած՝ սկսեցինք զգուշութեամբ գնալ ինչ-որ մի տեղ՝ մակոյկը քաշելով մեր յետելից։

Շաքրօն ինչ-որ փնթիփնթում ու ծիծաղում էր։ Ես անհանգիստ մտիկ էի անում շուրջաւ։ Մութ էր։ Յետելից և մեզնից դէպի աջ ալիքների վշտոցն աւելի ուժգին էր, առաջից դէպի ձախ՝ աւելի մեղմ։ մենք գնացինք դէպի ձախ։ Գետինն ամուռ էր, աւազոտ, բայց էլի փոս-փոս, երբեմն յատակին չէինք կպչում և թիավարում էինք ոսներով ու մի ձեռում միւսով բռնած նաւակից։ Երբեմն ջուրը միայն մինչև ծնկներս էր հասնում։ Խոր տեղերում Շաքրօն վայում էր, իսկ ես դողում էի սարսափահար։ Եւ յանկարծ՝ փրկութիւն-մեր առջև կրակ էր փայլում...»

Շաքրօն գոռաց, որքան ուժումը կար, բայց ես շատ լաւ էի իմանում, որ նաւակն արքունական է, և իսկոյն հարկադրեցի Շաքրօին յիշել այդ։ Նա սուս արաւ, բայց մի քանի ըոպէից յետոյ լսուեցին նրա հեկեկանքները։ Ես չկարողացայ նրան հանգստացնել, միջոց չկար»

Ջուրը քանի գնում՝ թշնառում էր... մինչև ծնկներս... մինչև ճիտքս... Ջուր այլև չկայ։ Ես ու Շաքրօն էլի քարշ

էինք տալիս արքունական նաւակը, բայց ոյժներս հատան, և բաց թողեցինք: Մեր ճանապարհին ընկած էր մի սև կոճղ. մենք ցատկեցինք նրա վրայով—և երկուսս էլ ստարորիկ ընկանք մի ծակող խոտի մէջ: Այդ ցաւ էր պատճառում և երկրի կողմից հիւրասէր բան չէր, բայց մենք ուշադրութիւն չըդարձրինք և վազեցինք դէպի կրակը: Նա մեզնից մի վերստ հեռաւորութեան վրայ էր և զուարթ պլազալով՝ ասես ծիծաղում էր մեր դէմ-հանդիման, իսկ խաւարն ահոելիօրէն երերում էր նրա շուրջը...»

## VI

... Երեք ահագին, բրդբրդու չներ խաւարի միջից դուրս պլրծնելով՝ մեզ վրայ յարձակուեցին: Շաքրօն, որ մինչև այդ ժամանակ ջղածզաբար հեկեկում էր, սարսափելի ճշաց և գետին ընկաւ: Ես թաց չէքմէնը շպրտեցի չների վրայ և կռացայ՝ ձեռքով որոնելով քար կամ փայտ: Ոչինչ չկար, միայն խոտն էր ձեռներս ծակոտում: Շները միահամուռ մեզ վրայ էին պլրծնում: Ես սուլում էի, որքան ուժումս կար, երկու մատս բերանումս դրած: Նրանք ետ քաշուեցին, և իսկոյն և եթէ լսուեց վազող մարդկանց ուսների տրոփին ու խօսակցութիւն:

Մի քանի ըռպէից յետոյ մենք արդէն խարոյկի մօտ էինք, ոչխարածների շրջանում, որոնք հագած էին ոչխարի մորթիներ՝ բուրդը դրախ կողմը դարձրած:

Երկուաը նստած էին գետնին և ծխում էին՝ ծուխն ահագին քուլաներով գուրս թողնելով. մինը—բարձրահասակ, խիտ սև միրքով և ղազախի բարձր փափաղով—կանգնած էր մեր յետել՝ արմատի ահագին կոմբալ ունեցող փայտին յենուած. Հորրորդը, մի ջահիլ շէկ տղայ, օգնում էր լացող Շաքրօին շորերը հանելու: Մեզնից հինգ սաժէնաչափ հեռու երկերը մեծ տարածութեամբ ծածկուած էր ինչ-որ թանձր, մոխրագոյն և ալիքածեն, գարնան՝ արդէն հալուել սկսող ձիւնի նման մի բանի շերտով: Միայն երկար և անընդհատ նայելուց կարելի էր ջոկել իրար կիպ սեղմուած ոչխարների առանձին կերպարանքներ: Այդտեղ նրանցից կար մի քանի հազար, քնից և գիշերւայ խաւարից կիպ սեղմուած, խիտ, տաք և հաստ շերտ դարձած, որ ծածկում էր դաշտավայրը: Երբեմն նրանք մկկում էին ողբաձայն ու ահալի...

Ես չէքմէնը չորացնում էի կրակի վրայ և ոչխարածներին ասում էի ամեն բան ճշմարտապէս. պատմեցի և այն միջոցի մասին, որով ձեռք բերի նաւակը:

—Ուր է նա, էս նաւակը, հարցրեց ինձնից խոժոռ ալևոր  
ծերունին, որ աչքն ինձնից չէր հեռացնում:

Ես ասացի նրանց:

—Գնա, Միխալ, մէկ մտիկ տուր...

Միխալը, այն սևամիրուքը, փայտն ուսին գցեց և ուղևո-  
րուեց դէպի գետափը:

Շաքրօն, որ ցըտից դողբողում էր, ինձ ինդրեց տալ ի-  
րան տաք, բայց դեռ թաց չէրմէնը, սակայն ծերն ասաց.

—Սպասիր. առաջ իմէկ վազվզիր, որ արիւնդ տաքացնես Վազիր խարոյիկ շուրջն, ասպա:

Շաքրօն սկզբից չհասկացաւ, բայց յետոյ յանկարծ պոկ  
եկաւ տեղից և մերկ՝ սկսեց պարել մի աներևակայելի վայրենի  
պար, խաղագնդի նման ոստուտալով խարոյկի վրայով, պտտե-  
լով մի տեղում, ոտները գետնին տրոփելով, ձեռները դէս-դէն  
թափ տալով: Իս մի չափազանց ծիծաղելի պատկեր էր: Երկու  
ոչխարածները գետնին թաւալում էին՝ ամբողջ կոկորդով ծի-  
ծաղելով, իսկ ծերը լուրջ, անյոյզ դէմքով աշխատում էր թա-  
թերով ծափ տալ պարի տակտի համեմատ, բայց չէր կարողա-  
նում հանգը գտնել, մտիկ էր տալիս Շաքրօի պարին՝ գլուխն  
օրոքելով ու բեղերը շարժելով և թանձրամած բատով շարունակ  
ձայն էր տալիս...

—Հայ-հա: Է՛դպէս, Է՛դպէս: Հայ-հա: Շափ, ծափ:

Խարոյիկի կրակով լուսաւորուած Շաքրօն օձի նման գա-  
լարում էր՝ ամենաբազմազան պողաներ բռնելով; ցատկում էր  
մի ոտի վրայ, յորդոր մանր տրոփիններ էր հանում երկու  
ոտներով, և կրակի լուսով փայլող նրա մարմինը ծածկում էր  
քրտնքի խոշոր կաթիլներով: Այդ կաթիլները կրակից թւում  
էին կարմիր, ինչպէս արիւն:

Այժմ արդէն բոլոր երեք ոչխարածներն էլ ծափ էին տա-  
լիս, իսկ ես ցըտից դողալով՝ ցամաքեցնում էի ինձ խարոյիկի  
մօտ և մտածում, որ իմ անցկացրած արկածը բախտաւոր կը  
դարձնէր Կուտարի և Ժիւլ-Ներսի մի որևէ երկրպագուի. կայ  
և նաւարկութիւն, և հիւրասէր բնիկներ (արորիգեններ), և  
վայրենիների պար խարոյիկ շուրջը:

Ահա Շաքրօն արդէն նստած էր գետնին՝ չէրմէնով փա-  
թաթուած և ուսում էր՝ մերթ-մերթ նայելով ինձ իր սև աչքերով,  
որոնցում կայծկլտում էր մի բան, որը մէջս անախործ զգա-  
ցում էր զարթեցնում: Նրա շորը չորանում էր՝ խարոյիկի մօտ  
հողում ցցած փայտերից կախած: Ինձ էլ հաց և աղով արած  
ճարպ տուին ուտելու:

Միխալը եկաւ և լուռ նստեց ծերի կողքին:

—Հը՞,—հարցը եց ծերը:

—Նաւակը կայ, —հակիրճ պատասխանեց Միխալը:

—Չուրը չմ՞ քշիւ:

—Զէ:

Եւ բոլորը լոեցին՝ նորից դիտելով ինձ:

—Հը՞,—հարցը եց Միխան՝ իսկապէս առանց մէկնումէկին:

Դիմելու, —տանել սրանց ստանիցան (գիւղը) ատամանի (գիւղապետի) մօտ: —Գուցէ աւելի լաւ է ուղղակի մաքսային ծառայողների մօտ տանել:

Միխալին ոչ ոք չէր պատասխանում: Շաքրօն իրան համար ուտում էր ու սուս էր:

—Կարելի է ատամանի մօտ տանել... նոյնպէս և՛ մաքսային ծառայողների մօտ... Դա էլ է լաւ, նա էլ, —ասաց ծերը՝ քիչ լուռ մնալով:

—Կայ, պապի... —սկսեցի ես:

Բայց նա վրաս ոչ մի ուշադրութիւն չդարձրեց:

—Ուրեմն էղպէս: Միխան: Էն բանը... նաւակն էնտեղ է:

—Էհը, էնտեղ է:

—Հը՞... ջուրը չմ՞ քշիւ:

—Ծծը... վի քշիւ:

—Դէ թնդ էնտեղ էլ կենայ... Իսկ էգուց մակոյկավարները կը գնան կերչ և իրանց հետ կը վերցնեն կը տանեն, ի՞նչ կայ որ չտանեն դատարկ նաւակը: Հը՞: Ուրեմն էղպէս... Իսկ էիմի դուք, զոչաղներ... բան... մնց է էն ինչը... Երկուսդէ չվախեցմք: Զէ՞ բժ-բօս... Կէս վերստ էլ անցած՝ լինէիք, ծովումը կը լինէիք էիմի: Ի՞նչ կ'անէիք, եթէ ծովը ընկնէիք: Հը՞: Երկուսդէ էլ տակ կ'անէիք երկաթի պէս: Կը խեղդուէիք կը գնայիք:

Ծերը լոեց և սկսեց նայել վրաս՝ բեղերում հեգնական ժպիտ:

—Ի՞նչ ես սուս կացել, այ տղա, —հարցը եց նա ինձնից:

Ես ձմնձրացել էի նրա դատողութիւններից, որոնք՝ չհասկանալով՝ համարում էի ծաղր մեզ վրայ:

—Ա՛յ, ականջ եմ դնում քեզ, —ասացի ես բաւական բարձացած:

—Է՛, որ ի՞նչ, —հետաքրքրուեց ծերը:

—Է՛հ, ի՞նչ կայ, որ ի՞նչ լինի:

—Էլ ի՞նչ ես ինձ ձեռք գցում: Էդ ի՞նչ կարգ է քեզնից մեծին ձեռք առնել:

Ես սուս կացայ:

—Բայց ուտել չես ուղում էլ, —շարունակեց ծերը:

— Զեմ ուզում:

— Է՞ն, մի ուտիր: Զես ուզում—չես էլ ուտիր: Բայց կարելի է ճանապարհի համար հաց կը վերցնես:

Ես ուրախութիւնից վեր թռայ, բայց ինձ չմատնեցի:

— Ճանապարհի համար կը վերցնէի...—հանգիստ ասացի ես:

— Էհէ... Դէ ուրեմն սրանց էնտեղ հաց ու ճարպ տուէք ճանապարհի համար... Բայց կարելի է ուրիշ էլ բան կայ, ինչ որ կայ, նրանից էլ տուէք:

— Ուրեմն դրանք զնալու են,—հարցրեց Միխալը:

Միւս երկուան իրանց աշքերը ծերի վրայ բարձրացրին:

— Բա էստեղ ի՞նչ պիտի անեն որ:

— Այս մենք ուզում էնք ատամանի մօտ տանել... կամ մաքսային ծառայողների...—հիամթափուած ծանուցեց Միխալը:

Շաքրօն խարոյկի մօտ դիրար եկաւ և գլուխը հետաքըրքը քրութեամբ դուրս հանեց չէքմէնից: Նա հանգիստ էր:

— Սրանք ատամանի մօտ ի՞նչ գործ ունեն: Անելու ոչինչ չունեն սրանք ատամանի մօտ կարծեմ... Յետոյ արդէն նրա մօտ կը գնան... եթէ ցանկանան:

— Իսկ նաւամկն ինչպէս կը լինի,—ձեռք չէր քաշում Միխալը:

— Նաւամկը,—հարցրեց ծերը:— Ի՞նչ է որ նաւակը: Տեղն է:

— Տեղն է...—պատասխանեց Միխալը:

— Է՛, թող ուրեմն տեղը լինի: Իսկ առաւօտեան այ իւղաշկան կը տանէ նաւահանգիստ, էնտեղից էլ կը վերցնեն կը տանեն կերչ: Պրծաւ գնաց:

Ես ակնդէտ նայում էի ծեր ոչխարածին և չէի կարողանում գտնել մի ամենափոքրիկ շարժում նրա ֆլեգմատիկ, արեառ ու քամհար դէմքին, որի վրայով սատոստում էին խարոյկի ստուերները:

— Մի բան դուրս չգայ յանկարծ...—սկսեց մեղմանալ Միխալը:

— Թէ որ լեզուդ քեզ պահես, հաւատա որ ոչինչ չի լինի: Իսկ եթէ սրանց տանես ատամանի մօտ, դա՝ ես կարծում եմ որ լաւ չի լինիլ թէ մեղ և թէ սրանց համար: Մեղ հարկաւոր է մեր գործն անել, սրանց—գնալ:— Է՛, հեղմու տեղ էք գնալու, հարցրեց ծերը, թէն ես արդէն ասել էի նրան, թէ որտեղ:

— Թիֆլիդ:

— Ճանապարհ շմտ կայ: Ա՛յ, տեսնում ես, իսկ ատամանը կը բռնի կը պահի սրանց. թէ որ պահի, սրանք Եղբ տեղ

կը հասնեն։ Ուրեմն աւելի լաւ է՝ թող գնան իրանց քէփին,  
ուր ուզում են։ Հը։

—Ի՞նչ անենք։ Թող գնան,—համաձայնեցին ծերի ընկեր-  
ները, երբ նա վերջացնելով իր յամը խօսքերը՝ շրթուքներն  
ամուր սեղմեց և հարցական կերպով նայեց բոլորին, մատնե-  
րով ոլորելով իր գորշ միրուքը։

—Դէ, ուրեմն Աստուած ձեղ հետ, տղերք, —ձեռքով արաւ  
ծերը։ —Իսկ նաւակը մենք իր տեղը կ'ուղարկենք։ Է՞նպէս է։

—Շնորհակալ եմ քեզանից, պապի, —գլխարկս վերցրի ես։

—Ինչի՞ համար ես շնորհակալ։

—Շնորհակալ եմ, ապեր, շնորհակալ եմ, —յուզուած կըր-  
կնեցի ես։

—Ա, իր ինչի՞ համար ես շնորհակալ է։ Ա՛յ զարմանալի  
բան։ Ես ասում եմ —Աստուած ձեղ հետ, իսկ սա ինձ—շնորհա-  
կալ եմ։ Միթէ դուվախում էիր, որ ես սատանային ձեղ հետ կը  
դնէի, հը։

—Մեղքս ի՞նչ թագցնեմ, վախում էի...—ասացի ես։

—Օ՛...—և ծերը վեր քաշեց յօնքերը։ —Ես ինչու պէտք է  
մարդուն վատ ճանապարհի վրայ դնեմ։ Հօ աւելի լաւ է՝ որ  
ես նրան այն ճանապարհը գցեմ, որով ես ինքս եմ գնում։  
Կարելի է դեռ էլի կը պատահենք, ուրեմն ծանօթ կը լինենք։  
Կարող է պատահել, որ հարկաւոր կը լինի իրար օգնել... Ճօ  
սվեկ (ցտեսութիւն)։

Նա վերցրեց իր բրդոտ ոչխարենի գլխարկը և զլուխ տուաւ  
մեզ, Գլուխ տուին և՛ նրա ընկերները։ Մենք հարցրինք Անա-  
պայի ճանապարհն ու գնացինք։ Շաքրօն մի բանի վրայ ծի-  
ծաղում էր։

## VII

—Ինչի՞ վրայ ես ծիծաղում, —հարցրի նրանից։

Ես հիացած էի ծեր ոչխարածից և նրա կենսական մո-  
րալից, ես հիացած էի և՛ լուսաղիմի թարմ քամուց, որ փչուժ  
էր ուղիղ մեր կրծքին, և՛ այն բանից, որ երկինքը մաքրուել է  
ամպերից, շուտով լուսանալու, արևը ելնելու է պայծառ երկին-  
քը, և փայլուն գեղեցիկ օր է ծնուելու...»

Շաքրօն խորամանկութեամբ աչքով արաւ ինձ և աւելի  
ուժգին քրքջաց։ Ե՛ս էլ էի ժպատում՝ լսելով նրա ուրախ, ա-  
ռոյդ ծիծաղը։ Ոչխարածների խարոյլի մօտ մեր անցկացրած եր-  
կու-երեք ժամը և համեղ հացն ու ճարպը յոզնեցուցիչ ճանա-

պարհորդութիւնից թողել էին միայն մի թեթև ոսկրացաւ..  
բայց այդ զգացումը չէր խանգարում մեր ուրախութիւնը:

— Է՛, ի՞նչ ես ծիծաղում: Ուրմի ես, որ կենդանի ես մը-  
նացել, հա: Կենդանի և դեռ կուշտ էլ:

Շաքրօն բացասաբար շարժեց գլուխը, կողքիս խփեց ար-  
մունկով, բերանով ծամածութիւն արաւ, նորից քրքջաց և  
վերջապէս ասաց իր կոտրտած լեզուով.

— ԶԲս հասկանում, թէ ինչնու է ծիծաղս գալիս: Զէ: Իս-  
կոյն կ'իմանաս: Դիտես, թէ ես ինչ պէտք է անէի, եթէ ինձ  
տանէին այդ ատաման-տամուժանի մօտ: ԶԲս իմանում: Ես  
քեզ համար կ'ասէի՝ նա ինձ ուզում էր խեղդի: Եւ կը սկսէի  
լաց լինել: Այն ժամանակ ինձ կը խղճային և բանտ չէին նըս-  
տացնիլ: Հասկանում ես:

Ես սկզբում ուզում էի այդ իբրև կատակ հասկանալ,  
բայց աւանդ, նա կարողացաւ ինձ համոզել, որ իր մտադրութիւնը  
լուրջ էր եղած: Նա այնպէս հիմնաւոր ու պարզ կեր-  
պով համոզում էր ինձ այդ բանում, որ ես փոխանակ նրա  
վրայ կատաղելու այդ պարզամիտ ցինիզմի համար՝ լցուցի  
խորին խղճահարութեան զգացմունքով դէպի նա: Ուրիշ ի՞նչ  
կարելի է զգալ դէպի մի մարդ, որն ամենափայլուն ժպտով և  
ամենանկեղծ տոնով պատմում է քեզ, որ ինքը մտադիր էր  
քեզ սպանել: Ի՞նչ անել նրան, բանի որ նա նայում է այդ ա-  
րարքի վրայ՝ որպէս մի սիրուն և սրամիտ բանի վրայ:

Ես սկսեցի տաքացած ապացուցել նրան իր մտադրու-  
թեան բոլոր անբարոյականութիւնը: Նա շատ պարզօրէն ա-  
ռարկում էր ինձ, որ ես չեմ հասկանում նրա շահերը, մոռա-  
նում եմ նրա ուրիշի անցաթղթով ապրելը և այն, որ դրա հա-  
մար նրա բանը վատ կը լինի...

Ցանկարծ մէջս մի դաժան միտք փայլեց.

— Կաց, — ասացի ես, — գուցէ դու հաւատացած ես, որ ես  
ուզում էի քեզ խեղդել:

— Զէ... Երբ դու ինձ ջուրն էիր հրում—հաւատում էի,  
երբ դու ինքդ մոտար ջուրը—չհաւատացի:

— Փառք Աստծու, — բացագանչեցի ես: — Է՛, դրա համար  
էլ եմ շնորհակալ:

— Զէ, մի ասիր շնորհակալ եմ: Ես քեզ կ'ասեմ  
շնորհակալ եմ: Այնտեղ խարոյկի մօտ դու մըսում էիր,  
ես մըսում էի... Զէքմէնը քոնն է: — Դու չպահեցիր քեզ  
համար: Դու չորացրիր և ինձ տուիր այն: Իսկ դու ոչինչ չվեր-  
ցրրիր: Ա՛յ, քեզ շնորհակալութիւն: Դու շատ լաւ մարդ ես,  
ես հասկանում եմ: Կը գնանք թիֆլիս, ամեն բանի փոխարէնը

Ալ ստանասւ։ Հօրս մօտ կը տանեմ քեզ։ Հօրս կ'ասեմ—այ, մմրդ։ Ուտացըրու սրան, խմացըրու սրան, իսկ ինձ էշի հետ ախոռումը կապիք։ Այս ինչպէս կ'ասեմ։ Մեղ մօտ կ'ապըրես, այդեպան կը լինիս, գինի կը խմես, սիրտդ ինչ ուզի՝ կ'ուտեսու... ախ, ախ, ախ... շատ լաւ կեանք կը քաշես։ Ուղղակի... կեր, խմիք ինձ հետ միասին, մի գաւաթով...

Նա երկար ու մանրամանօրէն նկարագրում էր այն կեանքի համն ու հուտը, որ պատրաստում էր ստեղծելու ինձ համար Թիֆլիսում իրանց տանը։ Իսկ ես նրա զբոյցի ժամանակ մտածում էի այն մարդկանց մեծ դժբախտութեան մասին, որոնք զինուելով նոր մորալով, նոր ցանկութիւններով, մենամենակ առաջ են ընկել ու կորել կեանքում և իրանց ճանապարհն հանդիպում են ուղեկիցների, նրանց համար խորթ, նրանց հասկանալու անընդունակ... ծանր է այդպիսի մենակների կեանքը... Նրանք անմուռնչ տարրում են օդում... Բայց նրանք տարրում են ինչպէս բարի հունդի սերմեր, թէպէտ և սակաւ են փթում արգաւանդ հողում...

Լուսանում էր Ծովի հեռաւոր կողմերը փայլում էին վարդագոյն ոսկու պէս։

—Քունս տանում է, —ասաց Շաքրօն։

Մենք կանգ առանք։ Նա պառկեց մի փոսում, որ փորել էր քամին չոր աւազի մէջ ծովափից ոչ հեռու, և գլուխը չէքմէնի մէջ փաթաթելով՝ շուտով քնեց։ Ես նստել էի նրա կողքին և նայում էի ծովին։

Նա ապրում էր իր լայնարձակ կեանքով, լի կարող շարժումով։ Ալիքների խմբերն աղմուկով ափին էին թաւալում և փշրում էին՝ աւազին ընդհարուելով, իսկ աւազը թոյլ փշում էր՝ ծծելով ջուրը։ Առաջընթաց ալիքներն իրանց ճերմակ բաշերը թափ տալով՝ աղմուկով խփում էին ափին և նահանջում՝ նրանից ետ մղուելով, իսկ նրանց էլ հանդիպում էին ուրիշ ալիքներ, որոնք գալիս էին նրանց օննութեան։ Նրանք ամուր գրկախառնուելով փրփուրի ու ցուքերի մէջ՝ նորից էին ափը զլորում և ծեծում նրան՝ ձգտելով իրանց կեանքի սահմաններն ընդլայնել։ Հորիզոնից մինչև ափը, ծովի ամբողջ տարածութեան վրայ՝ ծնուռմ էին այդ ճկուն ու կորովի ալիքները և շարունակ գնում, գնում իբրև մի խիտ զանգուած՝ միմեանց հետ սիրտ կապուած նպաստակի միութեամբ... Արևն աւելի ու աւելի պայծառ էր լուսաւորում նրանց շարքերը, և հեռաւոր ալիքները հորիզոնում թւում էին քոսորային։ Ոչ մի կաթիլ անհետ չէր կորչում ջրային զանգուածի այդ հսկայական շարժման մէջ, զանգուածի, որը ասես թէ ողեշնչուած է մի գիտակ-

ցական նպատակով և ահա հասնում է նրան այդ լայն, չափածոյ զարկերով։ Գրաւիչ էր առաջնութեաց ալիքների գեղեցիկ քաջութիւնը, ալիքների, որոնց բմբոստութեամբ թոշում էին լոիկ՝ ափը, և լաւ էր տեսնելու ժէ ինչպէս նրանց յետևից խաղաղ ու միաբան գալիս է ամբողջ ծովը, հզօր ծովը, արդէն ծիածանի բալոր գոյներով արրկա ներկուած և լի իր գեղեցկութեան և ոյժի զապուած գոյնութեամբ...

Հրուանդանի յետեից առաջնորը պատուելով՝ դուրս լողաց մի հսկայական շոգենաւ և ծանր ու մեծ, օրօրուելով ծովի յուղուած ծոցում՝ սուրաց իր ալիքների վրայ կատաղութեամբ յարձակուող ալիքների վրայով։ Այդ նաւը, գեղեցիկ և հուժկու, որի մետաղը պսպղում էր արևից, մի ուրիշ անգամ գուցէ կարողանար մտածել տալ մարդկանց հպարտ ստեղծագործութեան մասին, որ շահագործում է տարերքը... Բայց իմ կողքին պառկած էր մարդ-տարերքը։

## VIII

Մենք անցնում էինք Թերեփի լըջանով։ Շաքրօն սաստիկ գզզզուած ու պատուորուած էր և սատանայի պէս չարացած, աթէւ արդէն ոչ քաղցած այդժամ, որովհետև բաւական փող էինք վաստակում։ Նա որմէ աշխատանքի անընդունակ դուրս եկաւ։ Միանգամ փորձեց մի կալում յարդ տրմղել և կէսօրից յետոյ հիւանդացաւ՝ փոցխով թաթերին արիւնաներկ կոշտեր գոյացնելով։ Մի ուրիշ անգամ մենք մի դժուկ էինք շուռ տալիս, և նա քրոննով վզի կաշին պոկեց։

Գնում էինք շատ դանդաղ, —երկու օր բանում էինք, մի օր գնում։ Շաքրօն չափազանց անզուսապ կերպով էր ուտոնւմ, և շնորհիւ նրա որովայնամոլութեան ես ոչ մի կերպ չկարողացայ այնքան փող ետ զցել, որպէսզի հնարաւորութիւն ունենած հագնելու մի բան առնել նրա համար։ Իսկ նրա բոլոր շորերը մի բազմութիւն էին զանազանակերպ ծակերի, որոնք մի կերպ կապկպուած էին զանազան գոյնի կարկատաններով։

Մի անգամ մի ստանիցայում նա իմ պարկից հանեց՝ նբանից ծածուկ մեծ դժուարութեամբ ետ զցած էինդ րուբին երեկոյեան դարձաւ այն տունը, որի բանջարանոցում ես աշխատում էի, հարբած և մի հաստլիկ զազախ-կնոջ հետ, որն այսպէս բարեց։

—Բարե՛, անիծած հերետիկու։

Իսկ երբ ես զարմացած այդպիսի մականունով նորոց

Նրանից, թէ ինչու է ինձ հերետիկոս անուանում, նաև ապլում բով պատասխանեց.

— Նրա համար, սատանա, որ տղային արգելում ես սիրել կանաց սեռը! Միթէ՞ դու կարող ես արգելել, քանի որ օրէնքը թոյլատրում է... Անէծք դու...

Շաքրօն կանգնած էր նրան կողեին և դրականապէս գըլխով էր անում: Նա սասափիկ հարբած էր և երբ որևէ շարժում էր անում, ամրողջովին ոտնուճեռից ընկած օրօրւում էր: Նրա վարի շրթունքը կախ էր ընկած: Մթագնած աչքերը նայում էին դէմքիս անմտօրէն-յամառաբար:

— Է՛, դռն, ի՞նչ ես աչքերդ պլշել վրաներս: Տներ նրա փողերը,— գոռաց դոչաղ կինը:

Ի՞նչ փողեր, ապղեցի ես:

— Տներ, տներ: Թէ չէ ես քեզ կը տանեմ զինուրական կառավարչատուն! Տներ այն հարիւր յիսուն բուբլին, որ նրանից վերցրել ես Օդեսայում:

Ի՞նչ անէի: Սատանայի կինը հարբած-հարբած կարող էր խսկապէս գնալ զինուրական տունը, և այն ժամանակ դիւղական իշխանութիւնը, որ խիստ է զանազան շրջիկ անձերի վերաբերմաբ, կը կալանաւորէր մեզ: Մվկ գիտէ, թէ ինչ դուրս կը գար այդ բանտարկութիւնից ինձ ու Շաքրօնի համար: Եւ ահա ես սկսեցի քաղաքագիտօրէն սիրաշանել այդ կնոջը, որ իհարկէ՝ մեծ ճիղեր հարկաւոր չեկան: Մի կերպ երեք շիշ գիւնու օգնութեամբ ես նրան խաղաղացրի: Նա ընկաւ գետին ձըմերուկների մէջ և քննեց: Ես Շաքրօնին պառկեցրի, իսկ միւս օրը վաղ առաւօտեան ես ու նա դուրս եկանք ստանիցայից՝ թողնելով կնոջը ձմերուկների հետ:

Խմած լինելուց կիսահիւանդ, ճմլուած և ուռած դէմքով Շաքրօն ամեն ըովէ թքոտում էր և ծանր հառաջում: Ես փորձում էի նրա հետ խօսակցել, բայց նա ինձ չէր պատասխանում և միայն շարժում էր իր թաւ գլուխը յոգնած ձիի պէս:

Օրը շոգանում էր, և խիստ ու բարձր, համարեա մեր ուսերին հասնող խոտով ծածկուած խոնաւ հողի ծանր գոլորշիացումներով լցուած էր օդը: Մեր շուրջն ամենուրեք տարածուած էր կանաչ թաւչէ ծովը և դէպի տօթերկինքն էր արձակում իր հիւթալի բոյըը, որից մարդու գլուխ պնոյած էր գալիս...

Մենք գնում էինք մի նեղ շաւղով, որով ետ ու առաջ էին սողում փոքրիկ կարմիր օձեր՝ գալարուելով մեր ոտների տակ: Չորս կողմը տիրող անդորրութիւնը քուն էր բերում մեզ վրայ և գցում մի երազային նիրհի մէջ: Մեր յետեւում երկնքով դան-

դաղ շարժւում էին ամպակոյտերի սև խիտ շարքեր։ Միանալով իրար հետ՝ նրանք ծածկեցին ողջ երկնքը մեր յետեռում, մինչ դեռ առաջներս պարզ էր դեռ ևս, թէև արդէն ամպերի պատառներն այստեղ վաղեցին։ Կայտառ դէպի առաջ քշուեցին։ առաջներս կտրելով և աւելի ու աւելի խիտ ծածկելով երկինքը։ Հեռուում մի տեղ թնդում էր որոտը, և նրա փնթինթող հնչիւններն աւելի ու աւելի էին մօտենում։ Անձրևի խոշոր կաթիւններն սկսեցին թափուել և հարուել խոտին։ Խոտը մետաղանման խշում էր։

Տեղ չկար ապաստանելու։ Ահա մութն ընկաւ, և խոտի խշոցը հնչեց թէև աւելի բարձր, բայց մի տեսակ վախեցած Որոտը թնդաց—և ամպերը գողգողացին՝ կապոյտ կրակով համակուած։ Խոշոր անձրեւ թափուեց յորդ-յորդ, և որոտի թընդոցները մէկը միւսի յետեկից սկսեցին խրոխա ու անընդմէջ դլրդալ ամայի գաշտավայրում։ Քամու և անձրեւ հարուածներից կրացող խոտը պառկում էր գետնին և խշում՝ թոյլ հընչիւն հանելով։ Եւ ամեն ինչ դողում էր, ալեկոնծուում։ Շանթերը մարդու աչքեր գոցելով՝ պատռում էին ամպերը… Նրանց կապոյտ փայլի մէջ հեռուում երեսում էր մի լեռնաշղթայ՝ շողալիս կապոյտ կրակներով, արծաթագոյն ու սառը, իսկ երբ շանթերը մարում էին, նա անյայտանում էր՝ կարծես խաւար անդունդն էր գլորտում։ Ամեն ինչ որոտում էր, ցնցը ւում, ես մղում հնչիւնները և ծնում նրանց։ Ասես երկինքը, պղտոր ու զայրացած՝ կրակով էր սրբում իր վրայի փոշին ու ամեն-մի աղտեղութիւն, որ բարձրացել էր դէպի նա երկրից, և երկիրը թում էր թէ ցնցում էր՝ նրա ցասումից սարսափած։

Շաքրօն մըթմըթում էր, ինչպէս վախեցած շուն։ Իսկ ես ուրախ էի, ես մի տեսակ բարձրացել էի սովորականից՝ դիտելով գաշտային մրցկի այդ հզօր մույլ պատկերը։ Հրաշալիքասը գրաւում և հերոսական տրամադրութիւն էր ներշնչում։ մարդու հոգին համակելով խրոխտ ու վայրենի մի ներդաշնակութեամբ…

Եւ ես ցանկանում էի մասնակցութիւն ունենալ նրանում, մի բանով արտայայտել՝ հոգիս լցուած դէպի այդ խորհրդաւորոյժը հիացքի զպացումը, ոյժ, որ կործանում էր խաւարն ու ամպերը… կապոյտ բոցը, որ համակել էր երկինքը, թում էր թէ վառուում էր և իմ կրծքում։ և ինչնո՞վ կարող էի ես արտայայտել իմ մեծ յուզմունքը և իմ սքանչանքը քնութեան այդ փառանեղ պատկերի առաջ… Ես երգեցի—զիւ, ինչքան ձայնումը կար։ Որոտը թնդում էր, շանթերը շողջողում էին, խոտը

Խշում էր, իսկ ես երգում էի և ինձ զգում այդ բոլոր ձայների հետ միացած... ես գժութիւն էի անում, այդ ներելի է, ուրովիետք ոչ ոքի վնաս չէր հասնում, բացի ինձնից: Ես լցուած էի ցանկութիւններով՝ որքան կարելի է՝ շատ ձեռք բերել և ծեկ կենդանի ու կարող գեղեցկութիւն և ոյժ, որ փոթորկում էր ամայի դաշտում, և աւելի մօտ լինել նրան... Փոթորիկը ծովում և մրրիկն ամայի դաշտում!—ես չգիտեմ աւելի փառահեղ երևոյթներ ընուեթեան մէջ:

Եւ արդ, ես գոռում էի՝ խիստ հաւատացած, որ այդպիսի վարը մունքով ոչ ոքի չեմ անհանգստացնիլ և ոչ ոքի չեմ ստիպիլ խիստ բննադատութեան ենթարկելու իմ արածը: Բայց յանկարծ ոտիցս ամուր քաշեցին, և ես ակամայից նստեցի մի ջրալից փոսում...

Երեսիս նայում էր Շաքրօն լուրջ ու կատաղի աչքերով:

—Դու խելքդ թոցրել ես: Զես թոցրել: Զէ: Է՛, ուրեմն լոիր, մի գոռար, ես կոկորդդ կը պատռեմ, հասկանմամ ես:

Ես ապղեցի և սկզբում հարցրի նրանից, թէ նրան ինչնվեմ խանգարում...

—Վախեցնում ես, հասկացմաք: Որոտը որոտում է—Աստուած է խօսում, իսկ դու գոռում ես... Թեղ ինչացնու ես կարծում:

Ես նրան յայտնեցի, որ իրաւունք ունեմ երգելու, եթէ ցանկանում եմ, ինչպէս և նա:

—Իսկ ես չեմ ուզում,—կտրուկ կերպով ասաց նա:

—Մի երգիր, —համաձայնեցի ես:

—Դու էլ մի երգիր, —խստութեամբ ներշնչում էր ինձ: Շաքրօն:

—Ոչ, աւելի լաւ է՝ ես կ'երգեմ...

—Լսիր, դու ի՞նչ ես կարծում, —զայրացած խօսեց Շաքրօն: —Ո՞վ ես դու, դու տուն ունես, հայր ունես: Ազգականներ ունես, հող ունես: Ինչացնու ես դու աշխարհքիս երեսին: Դու մմրդ ես, կարծում ես: Էղ ես եմ մարդ: Ես ամեն բան ունեմ!.. Նա խփեց իր կրծքին:—Ես իշխան եմ!.. Իսկ դու... դու ոչինչ ես: Ոչինչ չունես: Իսկ ինձ ճանաչում է Քութայիսը, Թիֆլիզը... Հասկանմամ ես: Դու ինձ հակառակ մի՛ գնար: Դու ինձ ծառայժմ ես:—Գոհ կը լինիս: Ես քեզ կը հասուցանեմ տամնապատիկը: Դու ինձ էղպէս ես անում: Դու ուրիշ բան անել չեմ կարող, դու ինքդ էիր ասում, որ Աստուած հրամայել է ծառայել ամենքին առանց վարձարութեան: Ես քեզ կը պարզեցատրեմ: Ինչնու ես դու ինձ չարչարում: բաներ ես սովորեցնում, վախեցնում ես: Ուզում ես, որ ես էլ էնպէս դառնամ,

ինչպէս դժււ Թա լաւ չի: Զէ կարելի իրան նման դարձնել մի ուրիշն!.. է՛խ, է՛խ, է՛խ... թիւհ, թիւհ...

Նա խօսում էր, չմիշմիացնում, ֆռուացնում, հառաչ քաշում... Ես նայում էի նրա դէմքին՝ զարմանքից բերանս բաց: Նա՝ ինչպէս երևում է՝ առաջ էր թափում բոլոր վըդովմունքները, վիրաւորանքները և ինձնից ունեցած անբաւականութիւնները, որ դիզել էր իր մէջ մեր ճանապարհորդութեան ամրող ժամանակ: Աւելի խորը համոգելու համար նա մատով խփում էր կրծքիս և ուսերս շարժում, իսկ աւելի ուժգին տեղերում՝ ամբողջ մարմը նով վրաս էր գալիս: Մեզ թըջում էր անձրեւ, մեր վերևն անընդհատ թնդում էր որոտը, և Շաքրօն՝ որպէսզի ձայնը լըսեմ գոռում էր, որքան ուժումը կար:

Իմ դրութեան տրագիկոմիզմն աւելի ու աւելի պարզ երեւաց իմ առաջ և ինձ ստիպեց՝ որքան ոյժ ունէի քրքջալ...

Շաքրօն թըելով՝ երեսը դարձրեց ինձնից:

## IX

... Որքան աւելի էինք մօտենում Թիփլիզին, այնքան Շաքրօն աւելի էր դառնում կենտրոնացած ու մռայլ... Ինչոր նոր բան էր երևում նրա նիհարած, բայց էլի անշարժ դէմքին: Վլադիկավկազից ոչ հեռու մենք մտանք մի չէրքէզեան առւլ (գիւղ) և այստեղ վարձուեցինք սիմինդը քաղելու:

Երկու օր բանելով չէրքէզների մէջ, որոնք համարիան չէին խօսում ուսերէն և անդադար ծիծաղում էին մեզ վրայ ու հայնոյում մեզ իրանց լեզուով, մենք վճռեցինք առուից հեռանալ՝ առուցիների դէպի մեզ աւելի ու աւելի աճող թշնամական վերաբերմունքից վախեցած: Առուից տաս վերստաչափ հեռացել էինք, երբ Շաքրօն յանկարծ դուրս քաշեց ծոցից լէզգիսական քիսէյի մի փաթեթ և հրճուանքով ցոյց տուաւ ինձ՝ բացազանչելով.

— էլ հարկաւոր չէ բանել: Կը ծախենք — ամեն բան կ'առնենք: Հերթք կ'անի մինչև Թիփլիզ: Հասկաննեմ ես:

Ես վրդովուել էի կատաղութեան աստիճանի և քիսէյը խլելով նետեցի մի կողմ ու ետ մտիկ տուի: Զերքէզները հանաք-մասխանութիւն չգիտեն: Դրանցից քիչ առաջ մենք դագախներից լսել էինք այսպիսի պատմութիւն, մի բոսեակ հեռանալս այն առուից, ուր բանել էր, վերցրել էր տարել մի երկաթէ գդալ: Զէրքէզները յետկից հասել էին, խուզարկել, գտել նրա մօտ այդ գդալը և փորը խանչալով պատռելով՝ գդալը խորը դրել էին նրա վէրքի մէջ, իսկ յետոյ հանգիստ

հեռացել՝ թողնելով նրան դաշտավայրում, որտեղից զազախները նրան տարել էին կեսակենդան։ Նա էր այս պատմել նըրանց և ստանիցայի ճանապարհին մեռել։ Ղազախները յաճախ և շատ խիստ զգուշացնում էին մեզ չէրքէզներից՝ պատմելով խրատական պատմութիւններ այս ողով, —ես հիմք չունեմ նըրանց չհաւատալու։

Ես յիշեցրի Շաքրօին այս մասին։ Նա առաջս կանգնած լսեց և յանկարծ լուռ, ատամները կրծտացնելով ու աչքերը կը կոցելով՝ կատուի պէս վրաս յարձակուեց։ Հինգ բոպէի չափ մենք հիմնաւորապէս քոթկում էինք իրար, և վերջապէս Շաքրօն զայրոյթով պոռաց ինձ։

—Հերիք է...»

Զարչարուած՝ մենք երկար ժամանակ լուռ էինք, իրար դէմ նստուած... Շաքրօն խեղճ-խեղճ նայեց այն կողմն, ուր շպրտել էի կարմիր քիսէլը և ասաց։

—Ինչի՞ համար կուեցինք։ Ֆահ, ֆահ, ֆահ... Շատ յիշմար բան է։ Միթէ ես քեզնից էի գողացել... Դու բան ես անում, ես չեմ կարողանում... Ե՞ս ինչ անեմ։ Ուզում էի քեզ օդնել...»

Ես աշխատեցի բացատրել նրան, թէ ինչ բան է գողութիւնը...»

—Խնդրեմ, լրութիր։ Քո գլուխը փէտի նման է...—արհամարհական ձևով ասաց ինձ և բացատրեց։

—Կը մեռնեմ, որ գողանաս։ Հը։ Բայց միթէ սա կեանք է։ Զէնդ կարիք։

Վախելով, որ նրան նորից գրգռեմ, ես լրեցի։ Այդ արդէն գողութեան երկրորդ դէպքն էր։ Դեռ առաջ, երբ մենք Զերնօմորիէումն էինք, նա թուցրել էր յոյն-ձկնորսներից մի գրպանի կշեռք։ Այն ժամանակ էլ քիչ էր մնացել կուէինք։

—Դէ, զնմնք, —ասաց նա, երբ երկուսս էլ քիչ հանդարտուել էինք, հաշտուել ու հանգստացել։

Մենք շարունակեցինք ճանապարհ։ Նա օր-աւուր դառնում է աւելի ու աւելի մոռայլ և նայում էր վրաս տարօրէն, աչքի տակով։ Մի անգամ, երբ արդէն անցել էինք Դարեալի կիրճը և իշնում էինք Գուղաւորից, նա այսպէս խօսեց։

—Մի երկու-օր կ'անցնի —Թէֆլիզ կը համնենք։ Մծը, ծծը, —ծթծթաց նա լեզուով և բացուեց բաւականութիւնից։ Կը զնամ տուն, —մւր էիր։ Ճանապարհորդնւմ էի։ Բաղնիս կը գնամ... ընա։ Կ'ուտեմ շատ... միս, շատ։ Մօրս կ'ասեմ - շատ եմ սոված։ Հօրս կ'ասեմ —ներիք ինձ, ես շատ ցաւ ու կեանք եմ տեսել... զանազն տեսակ։ Բոսեակները շատ լաւ մարդիկ

են: Երբ պատահեմ, մի բուբլի կը տամ, կը տանեմ գինետուն, կ'ասեմ—գինի խմիր, ես ինքս էլ եմ բռնեակ եղել՝ Հօրսքեղ համար կ'ասեմ... Այս քեզ մարդ,—մեծ եղրօր պէս էր ինձ համար... Բան էր սովորեցնում ինձ: Ծեծում էր ինձ, շունը... Կերակրում էր: Եւ հիմի, կ'ասեմ, դու կերակրիր սրան դրատեղակ: Մի տարի կերակրիր—այ թէ ինչքան: Լսնում ես, Մակըթիմ:

Ես սիրում էի լսել, երբ նա խօսում էր այդպէս: Նա մի տեսակ պարզ և մանկական տեսք էր ստանում այդպիսի վայրկեաններում: Այդպիսի խօսքերն ինձ համար հետաքրքիր էին և այն պատճառով, որ ես Թիֆլիզում ոչ մի ծանօթ մարդ չունէի, իսկ ձմեռը մօտենում էր, Գուղառուրում արդէն բուք պատահեց մեզ: Ես Շաքրօի վրայ մի քիչ յոյս ունէի:

**Մենք** արագ էինք գնում: Ահա և՝ Մցիսէթը—Իրերիայի հին մայրաքաղաքը: Վաղը Թիֆլիզ կը համսնեմ:

Դեռ հեռուից՝ հինգ վերստացափ տարածութեան վրայ՝ ես տեսայ Կովկասի մայրաքաղաքը՝ երկու սարերի մէջ սղմուած: Ճանապարհի վերջն էր: Ես ուրախ էի մի տեսակ, Շաքրօն—անտարբեր նա բութ հայացքով առաջ էր նայում և մի կողմ թքոտում քաղցած թուքը՝ հիւանդու ծամածոռութեամբ շարունակ փորը բռնելով: Այդ նա անզգուշութեամբ հում գազար էր կերել, որ քաղել էր ճանապարհին:

—Դու կարծում ես՝ ես—վրացի ազնւականս—կը գնամ իմ քաղաքն օրըցերեկով այսպէս, ինչպէս որ կամ, պատուած ու կեղտոտ: Զէ-է... Մենք կը սպասենք երեկոյին, Կանգնիր:

**Մենք** նստեցինք մի դատարկ շինութեան պատի տակ և վերջին մի-մի հատ ծխախոտի գլանակները վառելով ցրտից դողուղալով՝ ծխեցինք: Ռազմավիրական ճանապարհից փչում էր սուր և ուժեղ քամի: Շաքրօն նստել՝ ատամների արանքով երգում էր մի թախծալի երգ... Ես մտածում էի մի տաք սենեակի և հաստատաբնակ կեանքի թափառական կեանքից ունեցած միւս առաւելութիւնների մասին:

—Գնանք, —տեղից բարձրացաւ Շաքրօն վճռական դէմքով:

**Մթնել** էր: Քաղաքը վառում էր ճրագները: Այդ գեղեցիկ էր. կրակները հետզհետէ, մինը միւսի յետսկից ինչոր մի տեղից դուրս էի ցատկառու խաւարի մէջ, որ պատել էր այն հովիտն, ուր քաղաքն էր թագնուած:

—Լսիր. Ինձ տուր այդ բաշլըզը, որ երեսս ծածկեմ... թէ չէ՝ կարելի է ծանօթներս ինձ ճանաչեն...

Ես տուի բաշլրդաւ: Մենք գնում ենք Օլ'գինսկայա փողոցով: Շաբրօն սուլում էր ինչ-որ մի վճռական բան:

— Մակուլիմ: Տեսնում ես ձիաքարշի կայարանը—Վերայի կամուրջը: Նստիր էնտեղ, սպասիր: Ես մտնեմ մի տուն, ընկերիցս հարցնեմ մերոնց մասին, հօրս, մօրս մասին...

— Շնուա կը գաս:

— Իսկըյն: Մի մոմենտ...

Նա արագ ներս խծկուեց մի մութ ու նեղիկ փողոց և անյայտացաւ նրանում... ընդմիշտ:

Ես այլև երբէք չպատահեցի այդ մարդուն—իմ ուղեկցին կեանքիս համարեա ամբողջ չորս ամսուայ ընթացքում, բայց ես յաճախ իմ յիշում նրա մասին բարի զգացմունքով և ուրախ ծիծաղով:

Նա ինձ սովորեցրեց շատ բան, որ չես գտնիլ իմաստուն-ների գրած հաստ Փոլիանտներում (մեծածալ գրքերում), որովհետեւ կեանքի իմաստութիւնը միշտ աւելի խորը և աւելի ընդարձակ է մարդկանց իմաստութիւնից:

### Թարգմ. ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆ

\* \*

Ժայռի կատարից իրիկնաժամին՝  
Նստած՝ ակնապիշ ես ծովս եմ դիտում.  
Ալեակների հետ խաղում է քամին,  
Վերջալոյսն անյօյս յօնքերն է կիտում:

Եղեգնուտի մէջ արագիլն անոք  
Խոկում է՝ թախծոս գրլուխը կախած.  
Խոկում եմ և ես լուռ ու մըտահոգ՝  
Վառ անուրջների անձնատուր եղած:

Շուրջը՝ լըռութիւն, թովիչ լըռութիւն,  
Շնորհատու լոյսի հեղդ անէացում,  
Վեհ խորհուրդների անհուն խորսութիւն,  
Կեանքի և մահուան դալուկ միացում:

### ՌԱՊԻԴԻՌԱ ԱՆՌՈՒԵԱՆ